

ՄԵՐ ԸՆԹԵՐՅՈՂՆԵՐՈՒՆ

Ս. Ծննդեան տօնին առիթով, «Ազդակ» լոյս պիտի չտեսնէ Երկուշաբթի, 7 Յունուարին:

Մեր յաջորդ թիւը՝ Երեքշաբթի, 8 Յունուարին:

ԼԱՅՈՒՏ ԸՆԴՈՒՆԵՑ ԶԱՍՄՈՒՏԸ

Նախագահ Վոր. Էմիլ Լախուտ երկէ ընդունեց արտաքին գործոց եւ արտերկրի լիբանանցիներու հարցերու նախարար Մահմուտ Համուտը, որուն հետ քննարկեց երկրի ընդհանուր վիճակը, ինչպէս նաեւ՝ Մարտին Պէյրութի մէջ գումարաւոր արաբական վեհաժողովի նախապատրաստութիւնները:

Նաեւ քննարկուեցան ջրային եւ միջազգային կարգաւորման, արտասահմանի մէջ Լիբանանի դէսպանատուններու հարողորած տեղեկագիրներուն լոյսին տակ:

Լ.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՍ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ Ս. ԵՆՆԴԵԱՆ ՊԱՏՊԱՆ

ԾԱՌԱՅՈՒԹԵԱՆ ՄԵԾՈՒԹԻՒՆԸ

«Ես ձեր մէջ ծառայի պէս եմ» (ՂԿ 22:27)

Այս բառերը կը պատկանին Բեթղեհէմի խնարհ մտորին մէջ աշխարհին յայտնուած Աստուծոյ Որդուն:

Անոր՝ որ ո՛չ միայն երկինքէն երկիր իջաւ, այլ երկինքը երկիր բերաւ իր ճշմարտութիւններով, իր սրբութեամբ, իր յաւերժութեամբ:

Անոր՝ որ ո՛չ միայն մարդ դարձաւ, այլ իր հաւատքի կեանքով, իր քաջ կեցուածքով ու իր ամբողջանուէր ծառայութեամբ ցոյց տուաւ մարդ ըլլալու ճշմարիտ ճամբան:

Անոր՝ որ իր լուռ տառապանքով, ամբողջական սիրով ու մահը մահով յաղթելու գիտակից յանձնառութեամբ մարդը պատեց իր եսի տիրապետութենէն ու չարի ճիրաններէն:

«Սոբորուրդ մեծ» է Նապոլեոնի Յիսուս իր երկրաւոր կեանքի արշալոյսով եւ վերջալոյսով

ու պիտի մնայ այդպէս, որքան ալ դարերը անցնին ու ժամանակները փոխուին: Կատարեալ Աստուած ըլլալով հանդերձ, կեանքը ըմբռնելու ու ապրելու իր իւրայատուկ մօտեցումով ու ոճով Բեթղեհէմի Մանուկը միշտ պիտի մնայ վաւերական մարդու տիպարը, այն մարդուն որ իր ճշմարիտ մեծութիւնը կը տեսնէ իր ծառայութեան մէջ:

Այսպէ՛ս եղաւ մարդեղացեալ Աստուած: Ան իր աստուածային փառքով ու պարտեամբ չմօտեցաւ մարդուն, այլ որպէս «վերապարան ծառայի»: Իր խնարհ ծնունդը Բեթղեհէմի մտու

ՍՈՒՐԲ ԵՆՆԴԵԱՆ ՇՐՈՒՄԸ

Ինք, որուն դիմաց նոյնիսկ զուարթուններուն գունդերը չէին կրնար կանգնիլ, զարհուրելով Աստուածութեանդ փայլակնացալ տեւ անմերձենալի յոյսէն, մեր փրկութեան համար մարդանալով՝ երկնայիններու հոգեղէն խումբերուն միախառնուելու շնորհքը սուաւ մեզի: (Պատարագամատոյց)

Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ սրբապան Պատարագի խորհրդրդատեւորէն արտասանուած այս աղօթքը, պատարագիչ քահանայն ցած ձայնով կը կարդայ Սուրբ Սուրբէն առաջ եւ նախ քան Նոր Ուխտի կնքման յայտարարութեան՝ Առէք Կերէքի գագաթունը, որով

մարդկային մեղաւոր ցեղին անէծքին դատապարտութիւնը ջնջուեցաւ եւ մեղքի ամբողջ դատավճիռը պատռուեցաւ մարդացեալ Միածին Որդիին շնորհիւ, որ մեզի տրուեցաւ իբրեւ պարտապան եւ պարտք, զոհ եւ երկնաւոր հաց, իբրեւ գառնուկ եւ երկնաւոր Հաց, իբրեւ քահանայ

յայտեւ պատարագ: Դրախտի երանական կեանքէն, մեղքի պատճառաւ պրկուած մարդուն փրկագործութեան համար Աստուծոյ հայրախնամ տնօրինումները՝ օրէնքի տուչութեամբ, մարգարէներով, քահանայութեամբ եւ

ԶԱՍՄԱԿԻՐՆԵՐՈՒ ԽՈՒՈՒՆԵՐԱՍ ՆԵՐԿԱՅՈՒԹԵԱՄԲ

ՃԱՇԿԵՐՈՅԹ՝ Ի ՆՊԱՍՏ «ՏՆՏԵՍԱԿԱՆ ԾՐԱԳԻՐՆԵՐՈՒ ՅՈՒՆՏ»ԻՆ



Ներկայութեան մաս մը:

3 Յունուար 2002ին ճաշարան «Աթլալ Փլագա»-ի մէջ տեղի ունեցաւ «Տնտեսական Ծրագիրներու Ֆոնտ»-ին կազմակերպած ճաշկերոյթը, որուն ներկայ եղաւ 500 հոգի: Գլխավոր ընթացքին Հ. Յ. Դ. Լիբանանի Կեդրոնական Կոմիտէի կողմէ ներկայներուն բարի գալուստ մաղթեց Յակոբ Հաւաթեան, որ շեշտեց կուսակցութիւն - ժողովուրդ անջակցութի կապը եւ վեր առաւ նման հրաւերներու համակիրներու ընդառաջման փաստին երեւոյթը:

Ապա ցուցադրուեցաւ Հ. Յ. Դաշնակցութեան յատկապէս լիբանանեան գործունէութիւնը ներկայացրնող ամփոփ տեսաժապաւէն մը:

Ճաշկերոյթի սեղանապետութիւնը վարեցին Եսայի Հաւաթեան եւ Զաքար Քէշիշեան:

Ազգային վիճակահանութեան մեծ պարգեւին վերջին 3 թիւերը կրող տոմար՝ 693, շահեցաւ «Տնտեսական Ծրագիրներու Ֆոնտ»-ին կազմակերպած վիճակահանութեան պարգեւը՝ 2002 տարուան «Մերսետես 500» տիպի ինքնաշարժը: Պարգեւը շահողը՝ Ռոպէր Էլիաս, այս առիթով 50 միլիոն լիբանանեան ոսկի նուիրեց Հ. Յ. Դաշնակցութեան Լիբանանի Կեդրոնական Կոմիտէին:

ՎԵՐԱԴԱՐՉ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ

Հովիւները դարձան, փառաւորեցին ու օրհնեցին զԱստուած այն ամէն բաներուն համար, զորոնք լսեցին ու տեսան, ինչպէս իրենց ըսուած էր:

Դարձեալ կը տօնենք Տէր Յիսուս Քրիստոսի ծնունդը, քիչ մը աւելի հեռացած՝ խաղաղութեան պատգամէն: Մէկ տարիով աւելի հեռու ենք Բեթղեհէմի դէպքէն՝ քան անցեալ տարի. եւ որքան աւելի հեռացած ենք խաղաղութենէն, պոր հրեշտակները պատգամեցին:

... «Երկրի վրայ խաղաղութիւն, մարդոց մէջ հաճութիւն...»: Իսկ մենք կը կորսնցնենք մեր խաղաղութիւնը եւ հաճութիւնը, մասնուած ըլլալով անապահով վիճակի, վաղուան մասին անձկութեան եւ անորոշութեան: Թէ որքանով տեղին է մեր անձկութիւնը՝ յայտնի պիտի ըլլայ ապագային, երբ խաղաղութեան պաշտպան ըլլալու յաւակնորդներ գործադրութեան հասցնեն իրենց ծրագիրները, դնելով պայմաններ, որոնք կը միտին ծրագրողին խաղաղութեան ի խնդիր՝ իրաւապրելի շատ ուրիշներ: Կը թուի, թէ այս վերջիններուն ոչ իրաւունքն է կարելու, ոչ ալ հաճութիւնը: Փոխադարձ ապահովութիւնը եւ ինքնարդարացումներու տարափիւն տակ՝ կը կորսուի ուրախութեան աւետիսը, «որ բոլոր ժողովուրդին պիտի ըլլայ»: Եւ Բեթղեհէմը, որուն երկինքը լուսաւորուած էր խաղաղութեան աստղով եւ հրեշտակներու լոյսով, այսօր շատ հեռու է մարդոց մատչելի եւ փափաքելի ըլլալէ:

Կը տօնենք գալուստը Օծեալ Տիրոջ, Փրկիչին, որուն մտորի խնարհութեան եւ խանձարուի հեղութեան մէջ է նշանը հրեշտակին պատգամին ստուգութեան: Պատգամ, որուն այնքան պէտք ունինք այսօր: Եւ եթէ մեր քրիստոնէական փորձառութիւնն է խաղաղութեան իշխանին մարդեղութեան նշանը, ապա անհրաժեշտ է, որ մենք պատգամաբերը ըլլանք խաղաղութեան՝ բոլոր մարդոց համար:

Հովիւները, որոնց ըսուած էր, թէ ինչ նշան ակնկալելու են, դարձան իրենց տեղը, իրենց գործին.

6 Յունուար 2002

Ա. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ ԻՐ ՀԱՒԱՏԱՐՄԱԳԻՐԸ ՅԱՆՁՆԵՑ ՆԱԽԱԳԱՋ ԼԱՀՈՒՏԻ



Նախագահ Վոր. Էմիլ Լախուտ երկէ ընդունեց Լիբանանի մէջ Հայաստանի դեսպան Արեգ Յովհաննիսեանը, որ նախագահին յանձնեց իր հաւատարմագիրը:

Դեսպան Յովհաննիսեան անդրադարձաւ Հայաստանի արտաքին քաղաքականութեան մէջ Լիբանանի դերին, եւ յոյս յայտնեց, որ հայելիբանանեան միջպետական յարաբերութիւնները կը շարունակեն կարգանալ:

Հանդիպումին նշուեցաւ լիբանանահայ համայնքին դերը՝ երկու բարեկամ պետութիւններ կամրջելու իմաստով:

ՂՈՎՍԻ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆ ՍԸ ԱՅՅԵԼԵՑ Հ. Յ. Դ. ԼԻԲ. ԿԵՂՐ. ԿՈՍԻՏԵԻՆ



Երէկ, Ղովմի Կուսակցութիւնը ներկայացնող պատուիրակութիւն մը, որ կը բաղկանար կուսակցութեան ղեկավար Ժըզարան Արաքժիէ, երեսփոխան Զասսան Աշքարէ եւ այլ պատասխանատուներէ, այցելեց Հ. Յ. Դ. Լիբանանի Կեդրոնական Կոմիտէին, Հ. Յ. Դ. Սարգարապատ ակումբին մէջ:

Հանդիպումին քննարկուեցան երկու կուսակցութիւններուն միջեւ գործակցութիւնը ամրապնդելու եւ զարգացնելու կարելիութիւնները, ինչպէս նաեւ՝ երկրի տնտեսական եւ քաղաքական կացութիւնը:

ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ 2002 ՏԱՐԻ ԵՒ Ս. ԾՆՈՒՆԴ

BANQUE EUROPEENNE POUR LE MOYEN-ORIENT SAL

Նոր Տարուան եւ Ս. Ծնունդի առիթով շուկայի վրայ է հայաստանէն նոր ներածուած

Yerevan Brandy Co. 3-Էն 20 փարոայ 24 փետակ գոնեակ

Armenian Wine 4-Էն 12 փարոայ 14 փետակ գինի

V.A.K. Trd. Հաստատութիւնը կը շնորհաւորէ ձեր Սուրբ Ծնունդը

Մեծարանակ եւ փոքրաբանակ վաճարքի համար դիմել՝ UNIVERSE Հաստ. Արմենիա Պողոսյայ, Սարգսյարապատ 2Էն, Փոյիկարպոս, Տեղ. 03/626177 - 03/773609

ՎԵՐԱԴԱՐՉ...

Ծարունակուած Ա. Էջէն

մէջ գերան ունեցողը չի կրնար ուրիշին աչքէն շիւղը հանել: Խաղաղութեան պատգամաբերներ կարելոր է, որ գործի անցնին, քանի այսօր ամբողջ մարդկութիւնը պէտք ունի խաղաղութեան: Պատգամաբերը, սակայն, պէտք է իր բերած պատգամին հաւատացած ըլլայ, որ պէսպի պատգամը ունենայ անհրաժեշտ վաւերականութիւնը:

Յետոյ, անհրաժեշտ է, որ դառնանք մեր տեղը, որպէսպի պատգամը ամբողջական ըլլայ: Հովիւները չմտնանք Բեթղեհէմ, այլ՝ դարձան: Դարձան իրենց միջավայրը, իրենց գործին, իրենց կեանքին. սակայն անոնք չէին կրնար դառնալ փրկութեան եւ ուրախութեան, խաղաղութեան եւ հաճութեան պատգամէն առջեւ իրենց ունեցած վիճակին: Իրենց տեսածը եւ լսածը պատմելու դարձան: Դարձան՝ վստուած փառաւորներու եւ օրհնելու:

Դիւրին են փառաբանութիւնը եւ օրհնութիւնը, երբ մեր անմիջական միջավայրէն դուրս՝ տարբեր տեղ ենք: Դիւրին է նաեւ մեր տեղը մնալ եւ նոյն մեր անշարժ կացութիւններուն եւ տեսակետներուն մէջ շարունակել: Դժուարը՝ փոխուելով դառնալ եւ նորոգուած մտքով ու հոգով՝ լսածը եւ տեսածը պատմելն է: Դժուար է այդ՝ որովհետեւ մեզ ճանչցողները, մեր մասին իրենց կարծիքը ունեցողները մեր միջավայրին մէջ են: Ճիշդ ասոր համար է, որ խաղաղութեան պատ-

գամը՝ խաղաղութիւնը՝ ներքին ամբողջական ձեւով՝ դժուար է: Ուրիշները հրաւիրելը պիտուներու, հարցերը չի լուծեր: Անձնական թէ՛ հաւաքական գետնի վրայ իրական է, թէ միայն պոհողութեան պատրաստականութիւնը կրնայ արժանահատուածութիւն տալ պատգամին: Իսկ քու միջավայրիդ մէջ՝ պիտիլը արժանապատուութեան հարց կը ստեղծէ, մինչ առանց անոր՝ պատգամը կիսատ կը մնայ:

Ոմանք հարցը լուծել կը փորձեն չվերադառնալով. ուրիշները՝ կը փորձեն պատգամը լուծելու. տակաւին ուրիշներ՝ պատեր կը հիւսեն իրենց շուրջ, եւ կը փորձեն դուրս ձգել իրենց սահմանափակ խաղաղութիւնը խանգարողները: Վերջապէս՝ ճիշդ է, թէ ուրիշին հողին վրայ պատերապմ տանիլը անոր քանդուածը կը պատճառէ եւ վերջ կը պահէ քեզ քանդուած: Սակայն նաեւ ճիշդ է, թէ ներկայ պայմաններով՝ պատերը չեն կրնար դուրս պահել խանգարողները: Կը խորհինք, թէ չենք սպառնալ, սակայն անխաղաղ վիճակները մեզի կը դառնան՝ ուշ կամ կանուխ:

Ամբողջական խաղաղութիւն, եւ անոր ամբողջական պատգամը, կը պարտադրեն, որ անձնապէս թէ հաւաքաբար դիմագրուենք անխաղաղ վիճակները եւ «խաղաղութիւնը նենք»: Այս կ'ենթադրենք, որ պատրաստ ըլլանք պիջուներու, մասնաւոր՝ դիմացի անձը լսելով եւ անոր կացութիւնը նկատի առնելով. եւ քաջ ըլ-

լանք իրականութիւնները դիմագրուելու: Հրեշտակներուն պատգամը հովիւներուն հասաւ, սակայն միայն անոնց փրկութեան եւ խաղաղութեան մասին չէր: Անոնք իւրացուցին պատգամը: Այդ ըրին՝ ստուգելով հրեշտակներուն բերած ակտիւնը նշաններուն վաւերականութիւնը: Ապա՝ ստուգելու աշխատանքին պահանջած պոհողութիւնէն տք ալ՝ քաջ եղան դառնալու իրենց տեղը, իրենց լսածով եւ տեսածով փառաւորներու վստուած, դառնալով Անոր խաղաղութեան պատգամաբերները:

Այսօր եւս, խաղաղութեան իշխանին ծնունդը տօնելով կը հրաւիրուինք, ակտիւն՝ մարտահրաւերը կ'ընդունինք, մենք եւս դառնալու մեր «տեղը», բոլոր դժուարութիւններուն եւ տագնապներուն մէջ յայտարարելու, թէ՛ փրկութիւնը եւ ուրախութիւնը, խաղաղութիւնը եւ հաճութիւնը մերն են եւ մենք պատրաստ ենք պանոնք բաժնեկցելու մեր նմաններուն հետ: Անմիջական մեր միջավայրին սկսելով՝ թող «Աստուծոյ խաղաղութիւնը, որ ամէն մտքէ վեր է, մեր (ձեր) սրտերը եւ մտքերը Յիսուս Քրիստոսով պահպանէ»:

Քրիստոս ծնալ եւ յայտնեցաւ Ձեզի մեզի մեծ ակտիւն:

ԿԸ ՆՈՒԻՐԵՆ

● Արտաշէս եւ Լուսին Տէր Խաչատուրեաններու մահուանց 8րդ եւ 3րդ տարեկիցին առիթով, տէր եւ տիկին Ժաք Պոյաճեան եւ տէր եւ տիկին Սիմոն Թաշճեան 25ական տղայ նոյնանուն ֆոնտին՝ «Չաթալպաշեան Թորգոմեան» վարժարանին:

ԿԸ ՆՈՒԻՐԵՆ

● Տէր եւ տիկին Ճորճ եւ Անիթա Սարգիսեան (Նիւ Ճորճի, Միացեալ Նահանգներ) հարիւր տղայ՝ ԼՕՆԻ «Արաքսի Պուլիդուրճեան» ընկերաբժշկական կեդրոնին:

ԹԱԼԻՆ
ԳԵՈՐԳԵԱՆ
ընդ
ՍԵՒԱԿ
ՃԱՍԼԵԱՆ
Նշանուած
1 Յունուար 2002,
Պէյրուք

La premiere au Liban
Autoroute Jdeideh
Près Boghos Optic
Tél. (01) 871261

ՍՈՒՐԲ ԾՆՆԴԵԱՆ ՏՕՆԸ
ՍՈՒՐԲ ՆՇԱՆ
ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԷՉ

Տեան Մերոյ Յիսուսի Քրիստոսի Սուրբ Ծննդեան տօնին առիթով, Կիրակի, 6 Յունուար 2002ին, հանդիսաւոր Սուրբ եւ անմահ պատարագ պիտի մատուցուի Սուրբ Նշան Մայր Եկեղեցոյ մէջ: Պիտի պատարագէ ու քարոզէ՝

ԳԵՐՇ. Տ. ԳԵՂԱՄ ԵՊՍ. ԽԱՉԵՐԵԱՆ
(Առաջնորդ Լիբանանի Հայոց թեմին)

Սկիզբ ժամերգութեան	ժամը 7:30ին
Ս. պատարագ	ժամը 9:30ին
Քարոզ	ժամը 10:30ին
Ջրօրհնէք	ժամը 11:30ին

Սիրով կը հրաւիրենք մեր սիրելի ժողովուրդը՝ ներկայ գտնուելու Սուրբ պատարագին, հաղորդուելու ու զօրանալու համար Բեղեհեմեան Խորհուրդով:

ԴԻՒՆ ԱՉ. ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Մեր Տիրոջ եւ Փրկչին՝ Յիսուս Քրիստոսի Ծննդեան եւ Աստուածայայտնութեան տօնի ճրագալոյցին օրը, այսօր՝ Ծաբաթ 5 Յունուար 2002ի երեկոյեան ժամը 9:00ին, հայկական ATN պատկերասփիւռի կայանէն, Ս. Ս. Օ. Տ. Արամ Ա. կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ Հայրապետական իր պատգամը պիտի ուղղէ մեր ժողովուրդին:

Վեհափառ հայրապետին նոյն պատգամը, կաթողիկոսութեան Web - Siteին ճամբով պիտի սփռուի մեր ժողովուրդին բոլոր գաւազներուն, հաղորդակից դարձնելով զանոնք Քրիստոսի Ս. Ծննդեան խորհուրդին:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Լիբանանի Հայոց թեմի առաջնորդ Գերշ. Տ. Գեղամ եպ. Խաչերեան Սուրբ Աստուածայայտնութեան տօնին առիթով, Կիրակի, 6 Յունուարին, շնորհաւորութիւնները պիտի ընդունի ԶԱՂԱՔԻ ԱՉԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ մէջ, առաւօտեան պատարագէն ետք մինչեւ ժամը 1:00, իսկ կէսօրէ ետք ժամը 4:00էն 6:00:

ՍՈՒՐԲ ԽԱՉ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԺՈՂՈՎՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆ - ԶԱԼԲԱ

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՅՑ ԱՄԱՆՈՐԻ ԵՒ ՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ ՏՕՆԵՐՈՒՆ

● Կիրակի, 6 Յունուար 2002 ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆ ԵՒ ՄԿՐՏՈՒԹԻՒՆ Տ.Ս.Յ.Ք.Ի ժամը 8:30ին Ս. Պատարագ ժամը 10:30ին կը պատարագէ եւ կը քարոզէ արհիպպատի ԸՄՅՐ ՎԱՐԴԱՆ ԵՊՍ. ԱՉԳԱՐԵԱՆ

● Երկուշաբթի, 7 Յունուար 2002 ՕՐ ՄԵՆԵԼՈՑ ժամը 8:30ին Ս. Պատարագ բոլոր ննջեցեալներու դիտաւորութեանց ժամը 10:30ին Չայնաւոր Ս. Պատարագ

ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ՀԱՆԴԻՍԱՒՈՐ Ս. ՊԱՏԱՐԱԳ ՆՈՐ ԱՏԱՆԱՅԻ Ս. ԱՏՏՈՒԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԷՉ

Ուրախութեամբ կը յայտնենք մեր սիրելի ժողովուրդին, որ Կիրակի, 6 Յունուար 2002 թուին, Ս. Ծննդեան եւ Աստուածայայտնութեան Տեան Մերոյ Յիսուսի Քրիստոսի տօնին առիթով, եպիսկոպոսական հանդիսաւոր Սուրբ եւ անմահ պատարագ պիտի մատուցուի Նոր Ատանայի Ս. Աստուածածին Եկեղեցոյ մէջ:

Պիտի պատարագէ ու քարոզէ՝

ԳԵՐՇ. Տ. ՎԱՐԴԱՆ ԱՐՔ. ՏԵՄԻՐՃԵԱՆ

Սկիզբ ժամերգութեան	ժամը 7:30ին
Ս. պատարագ	ժամը 10:00ին
Քարոզ	ժամը 10:30ին
Ջրօրհնէք	ժամը 11:00ին

Լ.Բ.Ը. ՊԱՏԿԵՐԱՍՓԻՒՌԵՆ

Այսօր՝ Ծաբաթ, 5 Յունուար 2002ին, Լ.Բ.Ը. պատկերասփիւռի կայանը իր «Նահաբոմ Սահա» յայտագրի ընթացքին (կէսօրուան ժամը 12:00էն 14:00), սննդականոնի մասնագետ ԳԱՐԼԱ ԵԱՐՏՍԵԱՆ պիտի ներկայացնէ հայկական գաւազան ձաշերու ճոխ ձաշացուցակ մը, ապա ան բացատրութիւններ պիտի տայ այդ ձաշերու ուժանկիւր, բաղադրութեան եւ մասնաւորաբար հայկական տոմիկի ակնարկութիւններու հետ կապուած տեղեկութիւններու շուրջ:

ԹԱՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ Ս. ԱՏՏՈՒԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ

ՍՈՒՐԲ ԾՆՆԴԵԱՆ ՏՕՆԸ
ՆՈՐ ՍԻՍԻ
Ս. ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԷՉ

Տեան Մերոյ Յիսուսի Քրիստոսի Սուրբ Ծննդեան տօնին առիթով, Կիրակի, 6 Յունուար 2002ին, հանդիսաւոր Սուրբ եւ անմահ պատարագ պիտի մատուցուի Ս. Սարգիս Եկեղեցոյ մէջ:

Պիտի պատարագէ ու քարոզէ՝

ՀՈԳՇ. Տ. ԳՐԻԳՈՐ ՎՐԴ. ԶԻՅԹՃԵԱՆ

Սկիզբ ժամերգութեան	ժամը 7:30ին
Ս. պատարագ	ժամը 9:30ին
Քարոզ	ժամը 10:30ին
Ջրօրհնէք	ժամը 11:00ին

Սիրով կը հրաւիրուի հաւատացեալ ժողովուրդը՝ ներկայ գտնուելու հոգեպարար այս արարողութեան եւ վերանորոգուելու իր քրիստոնէական հաւատքին մէջ:

ԹԱՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ Ս. ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑԻՈՅ

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ Ս. ՊԱՏԱՐԱԳ ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԷՉ

Կիրակի, 6 Յունուար 2002, Ս. Ծննդեան տօնին առիթով, հանդիսաւոր Սուրբ եւ անմահ պատարագ պիտի մատուցուի եւ Ջրօրհնէքի արարողութիւն պիտի կատարուի Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարին մէջ:

Պիտի պատարագէ ու քարոզէ՝

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ

ժամերգութիւն	ժամը 7:00ին
Ս. պատարագ	ժամը 9:30ին
Քարոզ	ժամը 10:30ին
Ջրօրհնէք	ժամը 11:30ին

Սիրով կը հրաւիրուի հաւատացեալ ժողովուրդը՝ ներկայ գտնուելու Սուրբ պատարագին, լսելու վեհափառ հայրապետին պատգամը եւ հաղորդուելու Ս. Ծննդի խորհուրդով:

ԴԻՒՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԻ

ԾԱՆՕԹ.- Պատարագէն ետք վեհափառ հայրապետը շնորհաւորութիւններ պիտի ընդունի վեհարանի դահլիճին մէջ մինչեւ ժամը 1:30, իսկ կէսօրէ ետք ժամը 4:00էն 7:00:

ՀԱՆԴԻՍԱՒՈՐ ՍՈՒՐԲ ԵՒ ԱՆՄԱՀ ՊԱՏԱՐԱԳ Ս. ՅՈՎՀԱՆՆՈՒ - ԿԱՐԱՊԵՏ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԷՉ

Կիրակի, 6 Յունուար 2002, Ս. Ծննդեան եւ Աստուածայայտնութեան տօնին առիթով, հանդիսաւոր Ս. պատարագ պիտի մատուցուի Ս. Յովհաննու - Կարապետ Եկեղեցոյ մէջ:

Պիտի պատարագէ ու պիտի քարոզէ՝

ՀՈԳՇ. Տ. ՄԱՇՏՈՑ ՎՐԴ. ԶՈՊԱՆԵԱՆ

Սկիզբ ժամերգութեան	ժամը 7:00ին
Ս. պատարագ	ժամը 9:00ին
Քարոզ	ժամը 10:00ին
Ջրօրհնէք	ժամը 11:00ին

Սիրով կը հրաւիրուի մեր բարեպաշտ ժողովուրդը՝ մասնակցելու սոյն հոգեպարար արարողութեան:

ԹԱՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ Ս. ՅՈՎՀԱՆՆՈՒ - ԿԱՐԱՊԵՏ ԵԿԵՂԵՑԻՈՅ

ՀԱՆԴԻՍԱՒՈՐ ՍՈՒՐԲ ԵՒ ԱՆՄԱՀ ՊԱՏԱՐԱԳ Ս. ՔԱՌԱՍՆԻՑ ՄԱՆԿԱՆՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԷՉ

Կիրակի, 6 Յունուար 2002, Ս. Ծննդեան եւ Աստուածայայտնութեան տօնին առիթով, հանդիսաւոր Սուրբ եւ անմահ պատարագ պիտի մատուցուի Ս. Քառասնից Մանկանց Եկեղեցոյ մէջ:

Պիտի պատարագէ ու պիտի քարոզէ՝

ԳԵՐՊ. Տ. ՆՈՐԱՅՐ Ծ. ՎՐԴ. ԱՇԸԳԵԱՆ

Երգեցողութիւնը պիտի կատարուի Եկեղեցոյս դպրաց դասին «ՆԱՐԵԿԱՅԻ» երգչախումբին կողմէ, Եկեղեցան քառաձայն եղանակով, խմբավարութեամբ՝ պրն. ԳԵՈՐԳ ՊԵՂԵՃԵԱՆԻ:

Սկիզբ ժամերգութեան	ժամը 7:00ին
Ս. պատարագ	ժամը 9:30ին
Քարոզ	ժամը 10:30ին
Ջրօրհնէք	ժամը 11:30ին

Սիրով կը հրաւիրենք մեր բարեպաշտ ժողովուրդը՝ ներկայ գտնուելու սոյն հոգեպարար արարողութեան եւ հաղորդուելու օրուան պատգամով:

ՍՐԲՈՑ ԶԱՌԱՍՆԻՑ ՄԱՆԿԱՆՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԹԱՂԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ՍՈՒՐԲ ԾՆՆԴԵԱՆ ՏՕՆԸ ՆՈՐ ՍԻՍԻ Ս. ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԷՉ

Տեան Մերոյ Յիսուսի Քրիստոսի Սուրբ Ծննդեան տօնին առիթով, Կիրակի, 6 Յունուար 2002ին, հանդիսաւոր Սուրբ եւ անմահ պատարագ պիտի մատուցուի Ս. Սարգիս Եկեղեցոյ մէջ:

Պիտի պատարագէ ու քարոզէ՝

ՀՈԳՇ. Տ. ԳՐԻԳՈՐ ՎՐԴ. ԶԻՅԹՃԵԱՆ

Սկիզբ ժամերգութեան	ժամը 7:30ին
Ս. պատարագ	ժամը 9:30ին
Քարոզ	ժամը 10:30ին
Ջրօրհնէք	ժամը 11:00ին

Սիրով կը հրաւիրուի հաւատացեալ ժողովուրդը՝ ներկայ գտնուելու հոգեպարար այս արարողութեան եւ վերանորոգուելու իր քրիստոնէական հաւատքին մէջ:

ԹԱՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ Ս. ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑԻՈՅ

ԱՐՑԱՆԻ ՕԺԱՆԳԱԿՈՒԹԵԱՆ ՖՈՆՏԻՆ

● Տօնական օրերուն առիթով, Շիրակ Տպարան - Հրատարակչատուն 250.000 լ.ն.

ԿԸ ՆՈՒԻՐԵՆ

● Ս. Յակոբայ տօնին առիթով, Ս. Յակոբ Եկեղեցոյ եղած են հետեւեալ նուիրատուութիւնները.

Մատաղի պատրաստութեան համար մասնակցած են.

Տէր եւ տիկին Սահակ Տէր Սահակեան 100,000 լ.ն., տիկին Յասմին Աթեան եւ պաւակունք 100,000 լ.ն., տէր եւ տիկին Խաչատուր Ստրշեան 100,000 լ.ն., տէր եւ տիկին Մովսէս Արամեան 100,000 լ.ն., Հայաշէնի Ս. Յովհաննու Կարապետ Եկեղեցոյ թաղականութիւն 100,000 լ.ն., տէր եւ տիկին Միքայէլեան Ժմիշիբեան 100,000 լ.ն., տէր եւ տիկին Ժորճ Վարդանեան 50,000 լ.ն., տէր եւ տիկին Ժորճ Միքայէլեան 50,000 լ.ն., տէր եւ տիկին Սուրբ Մարտին 50,000 լ.ն., տիար Խաչատուր Սարկոսեան 50,000 լ.ն., տէր եւ տիկին Անդրանիկ Գասապեան 50,000 լ.ն., տէր եւ տիկին Արտաշէս Սերայեան 100,000 լ.ն., տէր եւ տիկին Ժաք Պոյաճեան 50,000 լ.ն., տիար Յակոբ Տէր Յարութիւնեան 30,000 լ.ն., տէր եւ տիկին Պարգեւ Գերպապեան 30,000 լ.ն., տիկին Անահիտ Էքմէքճեան 30,000 լ.ն., տիար Արա Վասիլեան 30,000 լ.ն., տիար Անդրանիկ Լուսարարեան 30,000 լ.ն., օրդ. Օտէթ Քրիստիանեան 20,000 լ.ն., տիկին Լուսին Անդրեան 20,000 լ.ն., տէր եւ տիկին Եղիա Քիւրճեան 25,000 լ.ն., տէր եւ տիկին Յարութիւն Սարգիսեան 20,000 լ.ն., տիկին Անգինէ ճրդայեան 25,000 լ.ն., տիկին Աղանի Տօնէյեան 20,000 լ.ն., տէր եւ տիկին Աւետիս Թաթեան 25,000 լ.ն., Վարդուի Ճրրճրեան 10,000 լ.ն., տէր եւ տիկին Ժաք Միքայիսեան 10,000 լ.ն., տէր եւ տիկին Յակոբ Ասարեան 5,000 լ.ն.:

● Սոյն առիթով, Աղբատիւնի մէջ եղած են հետեւեալ նուիրատուութիւնները.

Տիար Ժան Ներսէսեան 50,000 լ.ն., Արփիւն Մելքոնեան 20,000 լ.ն.:

● Սոյն առիթով, Տիկնանց վարչութեան եղած են հետեւեալ նուիրատուութիւնները.

Տիկին Անճէլ Ունուտեան 3 հաւ, տիկին Արփիւն Պապիկեան 1000 հատ մատաղի տուփ, տիկին Մոմճեան կէս ոչխար, Արփիւն Տէր Կարապետեան 2 քիօ ձուար եւ 2 քիօ ալիւր, տիկին Սիրարփի Մանուկեան Հաճոթար 100,000 լ.ն., օրդ. Ժանէթ Ներսէսեան 100,000 լ.ն., տիկին Սանդուխտ Խաչերեան 20,000 լ.ն., Ատրիւն Տէր Յարութիւնեան 10,000 լ.ն., տիկին Կիւլիէն Աֆարեան 5,000 լ.ն.:

ԾԱՌ-ԱՅՈՒԹԵԱՆ ՄԵԾՈՒԹԻՒՆԸ

Շարունակում Ա. Էջեմ

րին մէջ, իր աղքատ մանկութիւնը Նպարէթ գիւղին մէջ էր պարզ կեանքը աշակերտներուն հետ Բրիտանի ծառայական կեանքին ամէնէն վաւերական արտայայտութիւնները եղան: Աստուած մարդ դարձաւ ծառայելու համար մարդուն եւ ծառայութեան ճամբով մարդը իր անկեղծ վիճակէն բարձրացնելու իր ճշմարիտ մեծութեան, իր «աստուածային» պատկերին: Արդ, ծառայութիւնը եղաւ Աստուծոյ անձին ու գործին ամէնէն տիրական երեւոյթներ:

րէն մէկը: Ծառայութիւնը եղաւ Աստուածամարդ յարաբերութեան ամէնէն ամուր կամուրջը: Բրիտան միայն չի ստեղծում ծառայութեան մեծութեան մասին, այլ ինքնաբերաբար ծառայողուն: Ան ծառայեց մարդուն անոր ուղեւոր լուրով, հիւանդին ստողութիւն պարզելով, կոյրին աչքերը բանալով, մեռելին կեանք տալով: Բրիտան ոչ միայն «վերաբարան» ծառայի» առաւ, այլ խաչի գիտակից մահով ծառայութեան տուաւ իր գեղարուեստ արտայայտութիւնը:

թիւնը, իր վաւերական իմաստը: Բրիտանի Աւետարանին էութիւնը կը կապուի ծառայութիւնը: Աստուծոյ Որդոյն իւրաքանչիւր հրաշքը, խօսքը, շարժումը ծառայութեամբ կապուած է: Արդարեւ, դժուար առաքելութեան մը համար Աստուած երկիր իջած էր: Մարդու փրկութեան իր աստուածային առաքելութիւնը Բրիտան իրազգործեց ծառայութեան ճամբով՝ դառնալով մեծ իտէպները համեստութեան ու ծառայութեան ամէնէն պարզ ու խոնարհ միջոցներով իրազգործող մարդկային պատմութեան մեծագոյն տիպարը:

քելութիւնը կը շարունակուի իր խորհրդական մարմնոյն՝ եկեղեցւոյ ճամբով: *** Բրիտան իր աշակերտներուն ըսաւ՝ «Աստուծոյ Որդին աշխարհ չեկաւ ծառայութիւն ընդունելու, այլ՝ ծառայելու» (Մտ. 20:28): Նոյնը ըսաւ հայ ժողովուրդին հայու ինքնութիւն ստացած Բրիտանի եկեղեցին Սուրբ Թադէոս եւ Սուրբ Բարթողիմէոս առաքելներուն եւ բոլոր ժամանակներու «անձինք» նուիրուելով: Եւ, իրաւամբ, այսպէս եղաւ հայ եկեղեցին: Ծառայութիւնը դարձաւ հայ եկեղեցւոյ կեանքին հիմքը, գոյութեան առանցքը, մտածողութեան կեդրոնը, առաքելութեան նպատակը: Եւ որքան նուիրումով ան ծառայեց մեր ժողովուրդին: Վկայ պատմութիւնը: Մեր եկեղեցւոյ ծառայութիւնը եղաւ բազմաթիւ ու բազմաբեղուն: Ան ծառայեց աղքատին ու հիւանդին, մշակութիւն ու դպրութեան, ազգին ու հայրենիքին: Ան ծառայութիւնը երբեք չըմբռնեց որպէս սոսկ մարդասիրական գործ կամ եկեղեցական պարտականութիւն, այլ իր ինքնութեան ու կոչումին անբաժան ու անբաժանելի մասը: Ահա թէ ինչու մեր եկեղեցւոյ ծառայութիւնը միշտ եղաւ ու մնաց ամբողջական, անվերապահ ու յանձնառու: Ծառայութիւն մը, որ դարձաւ ինքնիշխան ու նոյնիսկ արեւելիկայութիւն: Ծառայութիւն մը, որ ամբողջ պատմութիւն մը կերտեց եւ ինչու ժողովուրդի մը առջեւ բացաւ իր յանձնարարութեան ուղին: Ինչ կ'արժէ եկեղեցւոյ մը համար ունենալ նուիրապետական հարուստ կառոյց, աստուածաբանական խոր մտածողութիւն, մեծ թիւով հոգեւորական դաս կամ տնտեսական լայն կարելիութիւններ, երբ ան Մեծ Ծառային օրինակով ինքզինքը որպէս ծառայութեան չ'ընծայեր իր ժողովուրդին: Ինչ որ է եկեղեցին պէտք է թարգմանուի ծառայութեամբ, եւ ինչ որ ունի եկեղեցին

պէտք է դարձաւ վերածուի ծառայութեան մասն իր հիմնադիրին՝ Բրիտանի, որուն կեանքին Ալֆանու Օւեկան միայն ծառայութիւն եղաւ: Անցեալին, մեր կեանքի ամէնէն դժիւր պայմաններուն մէջ իսկ մեր եկեղեցին իր ժողովուրդին հետ, եղաւ յոյս ու լոյս դառնալով, սեր ու հաւատք բաշխելով, բարձրագոյն աստիճանի պատասխանատուութեամբ ու նուիրածութեամբ իր ժողովուրդին ծառայելով: Յարգանք մեր եկեղեցւոյ յարգանք մեր եկեղեցւոյ առաքելութիւնը մեր ժողովուրդի հաւաքական կեանքին մէջ ծառայութեամբ արժեւորած մեր «անձինք» նուիրուելով: Եւ որքան մեր եկեղեցին իր ծառայական առաքելութեան մէջ: Որքանով ան հաւատարիմ է իր սրբապան կոչումին: 1700ամեակ տօնեցին եւ արդարօրէն փառքը հիւսեցինք մեր ազգի, մեր եկեղեցւոյ, մեր հայրենիքին: Այժմ 1700ամեակի պատգամին մարտահրաւերին գործնապէս ընդառաջելու ժամը հնչած է: Մեր եկեղեցւոյ առջեւ կը բացուի իր հոգեւոր ծառայութեան կենսագործման նոր ժամանակաշրջան մը: Արդ, չի՛ բաւեր միայն յիշեցնել, թէ եկեղեցին ծառայութիւն է իր եւրոպեայի, իր կեանքով ու կոչումով: Որեւէ ժամանակեւելի մեր եկեղեցին կոչուած է ծառայելու մեր ժողովուրդին ամբողջանուէր յանձնարարութեամբ: Փոխանակ միայն քարոզելու ու թելադրելու, ան պէտք է ծառայէ իր հոգեւոր

սպասարներուն ժողովուրդի կարիքներուն: Մեր եկեղեցին իր ծառայութեամբ պէտք է ըսէ մեր ժողովուրդին՝ «Ես մեր մէջ ծառայի պէս նպաստ դնելով մեր

Շարք՝ էջ 10

ԼԵՆՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՏԱԳՆԱԴ

ԱԼԻԵՒ ՊԱՏՐԱՍ Է ՓՈՒ ԶԻՉՈՒՄՆԵՐՈՒ

Արպէյճանի նախագահ Հայտար Ալիեւ Նոր Շարունակ առիթով պերիներուն ուղղած իր խօսքին մէջ յայտնած է, թէ պատրաստ է Լեոնային Ղարաբաղի տագնապը լուծել փոխկիցումներու միջոցով: Ալիեւ Լեոնային Ղարաբաղի տագնապը նկատած է Արպէյճանի դիմագրաւած գլխաւոր հարցը: Ան նշած է, թէ մեծ աշխատանք տարուած է տագնապը 2001ի ընթացքին լուծելու համար, եւ անդրադարձած է ԵԱՀԿ Մինսքի խմբակի ծրագրին ներս կայացած բանակցութիւններուն, յատկապէս Փարիզի, Քի Ռեյթի, Մոսկուայի հանդիպումներուն եւ Մինսքի խմբակի նախագահող երկրներու ղեկավարներուն հետ տեսակցութիւններուն ընթացքին: Ալիեւ անդրադարձած է նաեւ Հայաստանի նախագահ Ռոպէրթ Քոչարեանի հետ հանդիպումներուն: «Բնականաբար այս բոլորը կը ստեղծեն համահայկանութիւններ, թէեւ ոչ այնքան մեծ, տագնապի լուծման համար» ըսած է Ալիեւ, յոյս յայտնելով, որ 2002ի ընթացքին լուծուի տագնապը: Ալիեւ նաեւ յայտարարած է, թէ «Լեոնային Ղարաբաղի տագնապը պիտի լուծուի տարածքային ամբողջականութեան եւ Արպէյճանի ինքնիշխանութեան սկզբունքին հիման վրայ եւ համաձայն միջազգային օրէնսդրութեան»: «Մենք միշտ վարեցինք կառուցողական քաղաքականութիւն, եւ պատրաստ ենք փոխկիցումներ քննարկել Հայաստանի հետ», նշած է Արպէյճանի նախագահը: «Որքան ալ բարդ ըլլայ տագնապը, եւ վստահ եմ, որ անիկա պիտի լուծուի, քիչեւ ուժերուն կողմէ բռնագրաւուած Արպէյճանական տարածքները պիտի անջատագրուին, եւ մեր հայրենակիցները, որոնք հեռագած էին իրենց բնակութեան վայրերէն, պիտի վերադառնան իրենց հողերը», յայտնած է Հայտար Ալիեւ:

Ու իր փրկագործական առաքելութիւնը ծառայութեան նոյն ճամբով համայն մարդկութեան տանելու յանձնարարութեամբ Բրիտան իր աշակերտները աշխարհ ղրկեց: Անոնց չըսաւ իշխեցէք, այլ ըսաւ՝ ծառայեցէ՛ք. չըսաւ ծառայութեան մասին խօսեցէք, այլ ըսաւ՝ ծառայեցէ՛ք. չըսաւ ծառայութիւն ընդունեցէք, այլ ըսաւ՝ ծառայեցէ՛ք: Ծառայութեան վրայ հիմնուեցաւ Բրիտանի եկեղեցին: Ծառայելու յանձնարարութեամբ Բրիտանեական եկեղեցին մուտք գործեց ազգերու կեանքին ներս: Բերդեհեմով հիմնաւորուած Բրիտանի ծառայական առաքելութիւնը միշտ եղաւ ու մնաց ամբողջական, անվերապահ ու յանձնառու: Ծառայութիւն մը, որ դարձաւ ինքնիշխան ու նոյնիսկ արեւելիկայութիւն: Ծառայութիւն մը, որ ամբողջ պատմութիւն մը կերտեց եւ ինչու ժողովուրդի մը առջեւ բացաւ իր յանձնարարութեան ուղին: Ինչ կ'արժէ եկեղեցւոյ մը համար ունենալ նուիրապետական հարուստ կառոյց, աստուածաբանական խոր մտածողութիւն, մեծ թիւով հոգեւորական դաս կամ տնտեսական լայն կարելիութիւններ, երբ ան Մեծ Ծառային օրինակով ինքզինքը որպէս ծառայութեան չ'ընծայեր իր ժողովուրդին: Ինչ որ է եկեղեցին պէտք է թարգմանուի ծառայութեամբ, եւ ինչ որ ունի եկեղեցին

պէտք է դարձաւ վերածուի ծառայութեան մասն իր հիմնադիրին՝ Բրիտանի, որուն կեանքին Ալֆանու Օւեկան միայն ծառայութիւն եղաւ: Անցեալին, մեր կեանքի ամէնէն դժիւր պայմաններուն մէջ իսկ մեր եկեղեցին իր ժողովուրդին հետ, եղաւ յոյս ու լոյս դառնալով, սեր ու հաւատք բաշխելով, բարձրագոյն աստիճանի պատասխանատուութեամբ ու նուիրածութեամբ իր ժողովուրդին ծառայելով: Յարգանք մեր եկեղեցւոյ յարգանք մեր եկեղեցւոյ առաքելութիւնը մեր ժողովուրդի հաւաքական կեանքին մէջ ծառայութեամբ արժեւորած մեր «անձինք» նուիրուելով: Եւ որքան մեր եկեղեցին իր ծառայական առաքելութեան մէջ: Որքանով ան հաւատարիմ է իր սրբապան կոչումին: 1700ամեակ տօնեցին եւ արդարօրէն փառքը հիւսեցինք մեր ազգի, մեր եկեղեցւոյ, մեր հայրենիքին: Այժմ 1700ամեակի պատգամին մարտահրաւերին գործնապէս ընդառաջելու ժամը հնչած է: Մեր եկեղեցւոյ առջեւ կը բացուի իր հոգեւոր ծառայութեան կենսագործման նոր ժամանակաշրջան մը: Արդ, չի՛ բաւեր միայն յիշեցնել, թէ եկեղեցին ծառայութիւն է իր եւրոպեայի, իր կեանքով ու կոչումով: Որեւէ ժամանակեւելի մեր եկեղեցին կոչուած է ծառայելու մեր ժողովուրդին ամբողջանուէր յանձնարարութեամբ: Փոխանակ միայն քարոզելու ու թելադրելու, ան պէտք է ծառայէ իր հոգեւոր

սպասարներուն ժողովուրդի կարիքներուն: Մեր եկեղեցին իր ծառայութեամբ պէտք է ըսէ մեր ժողովուրդին՝ «Ես մեր մէջ ծառայի պէս նպաստ դնելով մեր

TELE LUMIERE ՊԱՏԿԵՐԱՍՓԻՌԵՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԾՐԱԳԻՐՆԵՐ Ս. ԾՆՆԳԵԱՆ ՏՕՆԻՆ ԱՌԻԹՈՎ

Ս. Ծննդեան եւ Աստուածայանութեան Տօնին առիթով, TELE LUMIERE պատկերասփիւռի կայանէն Շաբաթ 5 եւ եւ Կիրակի 6 Յունուար 2002ին պիտի սփռուին հետեւեալ ծրագիրները:

ՀԱՐԱԹ, 5 ՅՈՒՆԻՍԻՐ 2002, ԾՐԱԳԱԼՈՅՑ

Գիշերուան ժամը 10:10ին՝ Ն. Ս. Օ. Տ. Տ. Արամ Ա. կաթողիկոս Ս. Ծննդեան Տօնին առիթով, հայրապետական խօսք պիտի ուղղէ մեր ժողովուրդի պատկերներուն:

Գիշերուան ժամը 10:20ին, մէկուկէս ժամ տեւողութեամբ Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան առաքելութեան մասին պատմական ժապաւէն մը՝ «ԱՒԻՏՔԻ ԱՌԱՔԵԼՈՒԹԻՒՆ»:

ԿԻՐԱԿԻ, 6 ՅՈՒՆԻՍԻՐ 2002, Ս. ԾՆՈՒՆԴ

Առաւօտեան ժամը 9:30էն 12:30, ուղղակի եթեր պիտի սփռուի Անթիլիասի մայրավանքին մէջ, Ն. Ս. Օ. Տ. Տ. ԱՐԱՄ Ա. Վեհափառ հայրապետին կողմէ մատուցուող Ս. պատարագը:

Երեկոյեան ժամը 8:00ին, Լիբանանի Հայոց թեմի առաջնորդ ԳԵՐՇ. Տ. ԳԵՂԱՄ ԵՊՍ. ԽԱՉԵՐԵԱՆ Ս. Ծննդեան իր պատգամը պիտի ուղղէ լիբանանահայութեան:

ԴԻԻԱՆ
ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԻ

THE CULTURAL HOUR
@
HAIGAZIAN UNIVERSITY
invites you to a lecture
on
*Opportunities & Constraints:
Lebanon in the Regional Economy*
by
KAREEN PFEIFER, Ph.D
Professor of Economics, Smith College
Fulbright Scholar
Thursday, January 10, 2002 - 7:00. p. m.
HAIGAZIAN UNIVERSITY
AUDITORIUM - KANTARI

ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ ԼԻԲԱՆԱՆԻ ԾՐԱՍԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ
Կը ներկայացնէ
Վ. ՍՏԵՓԱՆԵԱՆԻ
«ԱՄԲՈՂՋ ԱՃԽԱՐԸԻՆ ՈՒՐԱՆ ՆՈՐ ՏԱՐԻ»
ԱՍԱՆՈՐԻ ՈՒՐԱՆ ԸԱՆԴԵՍԸ
Բենադրութիւն՝ **ՎԻԳԵՆ ՍՏԵՓԱՆԵԱՆ**
Պար՝ **ՖԵԼԻԵՍ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ**
Երգ՝ **ԶԱԵՐ ԷՇԻՇԵԱՆ**
Մասնակցութեամբ՝ Ըմբողջապիմի «ԱՐԵԳ», «ԳԱՅԻԱՆԵ», «ԿԱՐԿԱԶ» եւ «ՈՐՈՐԱՍ ՈՐՈՒԼԻՆ» մանկապատանեկան միաւորներուն:
Ելոյթները կը շարունակուին Կիրակի 6 Յունուար 2002, կեսօրէ ետք ժամը 5:00ին, «Յակոբ Տէր Մելքոնեան» բառերասարահիմ մէջ:
●Տոմսերը կը վաճառուին՝ Գրատուն OBELIX (Անթիլիաս), Ըմբողջապիմ Գրախանութ (Պուրճ Ըմբողջ), Տիւրքիք GEKA (Պուրճ Ըմբողջ), Սթիւտիո ՎԱԶԷ (Ըմբողջ), Ըմբողջապիմի «Լ. Ծանօ» կեդրոն (Պուրճ Ըմբողջ) եւ ելոյթի օրերը կրէնէն:

ԳՈՐԾԱԾԵՑԷՔ FUEL CARDԸ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԾՐԱԳԻՐՆԵՐՈՒ ՅԱՉՈՂՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

ԻՆՉՊԵՍ ԳՈՐԾԱԾԵԼ FUEL CARD-Ը

Ձեր ինքնաշարժից պենզին, մագլթին, իւղին, ինչպէս նաեւ լուրջ համար, վճարումն հետ միաժամանակ ներկայացուցէք FUEL CARD-ը, այս ձեւով մեր մասնակցութիւնը բերած կ'ըլլաք տնտեսական ծրագիրներու յաջողութեան:

ԻՆՉՊԵՍ ՍՍԱՆԱԼ FUEL CARD-Ը

FUEL CARD-ը կրնաք ստանալ հետեւեալ կեդրոններէն:-

- ԱՅՇԼԻԿ գրասենեակ, Պուրճ Ըմբողջ
- Շ ա մ ա գ ա յ ի մ ի գրախանութ, Պուրճ Ըմբողջ
- Գրատուն Caravelle, Չալքա
- Գրատուն Sava, Այնճար
- Գրատուն Կոմիտաս, Պէյրութ
- Obelix հաստատութիւն, Անթիլիաս

Յարգելով մանրամասնութեանց համար հեռաձայնել՝ 01-242556 քիւիմ:

Մագլթի սպասարկութեան համար հեռաձայնել՝ 04-715111, 04-715222 եւ 04-715333 քիւերուն:

ԵՍՐԸ
ՎԸ ՍՍԱՆԱԼ
ՉՐԻՕՐԵՆ

ՎՐԺԷՔՎՈՐ ՆՈՒԷՐՆԵՐ
ԵՒ ԻՆՔՆԱՉՎՈՐ ՍԸ

FUEL CARD ԿՐՆԱՔ ՕԳՏԱԳՈՐԾԵԼ ԸՏԵՒԵԱԼ ԿԱՅԱՐԱՆՆԵՐՈՒՆ ՍԷՉ

1. CORAL JAL EL DIB, Ժել էլ Տիպ
2. HYPCO ANTELIA, Ըմբողջ Ալ Ըմբողջ
3. SPEED ANTELIA, Կաթողիկոսարանի դիմաց
4. CORAL BAABDAT, Պատարձ մայրուղի
5. SPEED ACHRAFIEH, Էլ Նահր PEUGEOT ընկ. առջ
6. HYPCO HAMRA, Պանք Տի Լիպանց առջ
7. MEDCO KARANTINA, Ըմբողջի մայրուղի
8. CORAL BHAMDOUN, Ըմբողջի մայրուղի
9. CORAL MAR MIKHAEL, Մար Սիլայել, Սատա պողոտայ
10. SPEED ALITTIHAD, Կալեթի Իթիհատ
11. MANAR FANAR, Ֆանար, Նատար պանդոկին կից
12. CALTEX ANJAR, Այնճար
13. BASSIL DORA, Տորայի կամուրջ
14. ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՅԱՐԱՆ, Տորա, «Այմազա»-ի կից
15. ՍԱՐԳԻՍԵԱՆ ԿԱՅԱՐԱՆ, Պուրճ Ըմբողջ, Սիւն էլ Ֆիլի մայր պողոտայ

ԼԱԻԱԳՈՅՆ ՄՏԱԾՈՒՄԸ ՎԵՐՋԻՆ ՎԱՅՐԿԵԱՆԻՆ

\$269

\$119

Model 21D3XMJ 21inch FLAT

TOSHIBA

2 Head VCR Model V-E28 \$119
4 Head VCR Model V-E38 \$149

ԱՂԱՍԱՐԳԻՍԵԱՆ ԸՄՍԱՏՈՒԹԻՆ Պուրճ Ըմբողջ, Ըմբողջապետարանի հրապարակ, հեռ. 241000

ԽՈՐՀՈՒՐԴ ՄԵԾ ԵՒ ՍՔԱՆԶԵԼԻ

Խորհուրդ մեծ է սքանչելի. Որ յայսմ աւոր յայտնեցաւ. Հովիւքն երգեն ընդ հրեշտակս Ծանն աւետիս աշխարհի:

Խորհուրդ մեծ է սքանչելի, Որ այսօր յայտնուեցաւ. Հովիւքն երգեն հրեշտակներու հետ, Աւետիս կու տան աշխարհի:

Ծնաւ նոր արքայ ի Բեթղեհէմ քաղաքի. Որդիք մարդկան, օրհնեցէ՛ք, Զի վասն մեր մարմնացաւ:

Ծնաւ նոր արքայ Բեթղեհէմ քաղաքին մէջ. Մարդոց սերունդներ, օրհնեցէ՛ք, Բանգի մեզի համար մարմնացաւ:

Անբաւելին երկնի եւ երկրի ի խանձարուրս պատեցաւ. Ոչ մեկնելով ի շօրէ, ի սուրբ այրին բազմեցաւ:

Ան, որուն չէր բաւեր երկնքն ու երկիրը, Զգեց, որ խանձարուրի մէջ պատեն զինք. Զգատուելով իր շօրմէն, Սուրբ քարայրին մէջ բազմեցաւ:

ՄԱՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՅԻ

ՊԱՐԶՈՒԹԵԱՆ ՄԵԾՈՒԹԻՒՆԸ

«Եւ ծնաւ զորդին իւր անդրանիկ, Եւ պատեաց ի խանձարուրս Եւ եղ զնա ի մուր, Զի ոչ գոյր նոցա տեղի յիջեաւնին»: (ՂԻԿ. Բ. 7)

Մեր Տիրոջ՝ Յիսուսի Բրիստոսի ծննդեան դրուագի այնքան նկարագրել աւետարանական պատմւմին մէջ ամէնէն յատկանշական եւ գրաւիչ գիծերէն մէկն է պարզութեան, աղքատութեան, համեստութեան այն երեւոյթը, որ ծննդեան պատմութեան կու տայ բացառապէս խորհրդային եւ վեհամասն նշանակութիւն մը եւ նկարագրի մը:

Պարզահոգի եւ բիւրեղատեսիլ կոյսէ մը ծնաւ Բրիստոս:

Պարզամտութեան եւ համեստութեան քողին տակ, արտաքին անշքութեան մէջ մեծեցած, արտաքինապէս անզարդ ու անփայլ անձ մըն էր աստուածամայրը՝ Մարիամ:

Պարզ արհեստի տէր անձ մը, Հելեն, ատաղձագործ մը եղաւ իր հայրը՝ Յովսէփի, բնատուր առաքինութեանց շնորհներով օժտուած անձ մը՝ առանց ինքնանկատ Ծաղումի, դիրքի եւ զօրութեան:

Պարզութեան բոլոր տուեալներով յատկանշուած միջնորդութիւն մը մէջ ծնաւ այն աննշան մա-

նուկը, որ երբ իր կեանքին վերջակէտին պիտի հասնէր մահացողի խաչին վրայ՝ իր թշնամինները ԹԱԳԱԽՈՐ բառով պիտի կնքէին անոր անունը: Ինչեւան մը, արեւելեան պանդուխտ մարդն էին համեստ սենեակ մ'անգամ չգտնուեցաւ, ուր ծնէր ան՝ որմէ պիտի վերածննդէին ազգեր եւ ժողովուրդներ դարբերու ընթացքին: «Զի ՈՉ ԳՈՅՐ ՆՈՅԱ ՏԵՂԻ ՅԻՋԵՒԱՆԻՆ»: Ան - բան եւ ան - ասուն էակներու մտեր մը հազիւ գտնուեցաւ, որ անոր մօր ընծայեց տաքուկ բոյն մը այս երկրաւոր կեանքին կոչելու համար կեանքի պարզեւատուն, այն՝ որմէ կեանք առած էր կեանքը՝ ինք:

Պարզ մարդիկ, խաչնարած հովիւներ, մարդկային ընկերութեան «յետին» շարքերուն դասուած անձեր եղան առաջին վկաններն ու յարգեցողքն ընծայողները նորածին մանկան:

Պարզութեան, աղքատութեան, անսեթեթեթ եւ անպաճոյճ պայմաններով շրջանակուած ծննդեան այս տեսարանին մէջէն

Աստուած ինչ խորհուրդ կը բանայ մեր աչքերուն դիմաց: Ի՞նչ է իմաստը Յիսուսի ծնունդը շրջապատող պարզութեան այս երեւոյթին:

Աստուած իր ընտելութեան մէջ ըմբռնուած է ՊԱՐԶՈՒԹԵԱՆ ստորագելով: Ամէն ինչ որ իր մէջ կը ճառագայթէ, սիրոյ ճաճանչումով, պարզ է եւ պարզութեան մէջ՝ գեղեցիկ: Մէրը, իսկական, վաւերական սէրը պարզ է, այսինքն՝ ճառագայթում բարութեան, ծառայութեան՝ անստուեր, անխառն, անսակարկ: Զճարտութիւնը, աստուածարուխ իր բնութեան մէջ, պարզ է. երբ հանդիպիս անոր՝ ամէն ինչ ջինջ է, խաղաղ ու բերկրալի՝ հոգիի մէջ: Գեղեցիկութիւնը՝ պարզութեան եւ այլապէս ընկերակցութեան շրջապոկն է ներս՝ ներդաշնակութեան մէջ ունի իր աղբիւրը:

Ամենայն Հայոց ԳԱՐԵԳՐԵ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ



ՃՇՄԱՐՏՈՒԹԵԱՆ ԱՐՇԱՆՈՅՍԸ

«Անբաւելին երկնի եւ երկրի ի խանձարուրս պատեցաւ»:

ՇԱՐԱԿԱՆ ԾՆՆԴԵԱՆ

Գերագոյն նշանակութեան որոնումը գոյութեան հիմնահարցի վերածած մարդ արարածը, քաղաքակրթութեան ոլորտներէն ներս հազիւ ոտք դրած, իմացական նամբաներով միշտ ալ փորձած է հասնիլ իր հոգեմտաւոր հարցադրումներուն պատասխան բերող իմաստասիրական լուծումներու: Իրեքաշարք բազմաթիւ կրօնքներ եւ բարոյախօսական դպրոցներ, արեան նամբով մարդը դեպի գոհաբերութիւն մահ առաջնորդած է Զեքնուական կրօնէն մինչեւ մարդուն օրհնուողական իշխանութիւն տուած Հրեական կրօն եւ եպիկուրեան ու Ստոյկեան դպրոցներէն մինչեւ Ոչնչապաշտութիւն, բոլորն ալ, վերջ գտած էին վերջնական պարտութեամբ, պարզ այն պատճառով, որ չէին ձգտած գերագոյն նշանակութեան եւ այս կամ այն տարրութեամբ հիմնուած էին վրէժի, սարսափի, պատուհասի, մահուան, պարզ խօսքով՝ մարդու ոչնչացման գաղափարին վրայ:

Բրիստոսի ծնունդէն առաջ մարդկութեան նախնային վարդապետութիւնները, մասնաւորաբար Արեւելքի մէջ, ծախողած էին նաեւ այն պատճառով, որ անոնք չէին դիմացած կեանքի փորձին եւ մնացած էին կամ քարացեալ առարկայականութեան եւ կամ ալ իմացական տեսութիւններու վերացական ոլորտներուն մէջ: Հասած էր ժամանակը, որ Գերագոյն ճշմարտութիւնը՝ Աստուած ինքզինք յայտնէր մարդկային շօշափելի կերպարանքով եւ մարդը վեր բարձրացնէր իր մարմնեղէն իրականութեան:

Անձին օրհնակով: Մարդեղացեալ Աստուածորդիին կեանքի վարքով:

Բեթղեհէմի մուրեկն 2002 տարի առաջ ծագած ճշմարտութեան Արշալոյսը փրկութեան ու յաղթանակի աւետիսը կը ճառագայթէր լուռ ու անշուշտ, աննշան ու անհրապոյր մուրեկ մը, որովհետեւ «Նոր Արքան» սովորական գահակալ մը չէր, այլ Հոգիի՝ Թագաւորը, որ իրեն հետ մարդկութեան պիտի բերէր խաղաղութեան, ազատութեան, բարեկեցութեան հոգեկան ընծաները, մէկ խօսքով՝ մարդուն ամբողջական փրկութիւնը:

Բեթղեհէմի մուրեկն ծագած լոյսին հետ, մահէն դեպի կեանք մարդուն երթը կը սկսէր աստուածաման մարդուն յաղթանակով: Մարդը կը վերագտնէր իր աստուածաստեղծ բնութիւնը ու աստուածապարգեւ առաքելութիւնը եւ այս հրեւումը կը սկսէր հիւսել գիրով ու երանգով, մեղեդիով ու քանգովով: Անսահման սիրով մարդեղացեալ կերպարուն մով սկսած «մեծ եւ սքանչելի խորհուրդը» բնականաբար, առաջին հերթին պիտի յուզէր ներքին լարերը մեր հոգեւոր հայրերուն, որոնք շարքանկաներով ու մանրանկարներով ձայն ու գոյն պիտի տային իրենց հոգեկան հրեւումներին:

Այսպէս, տակաւ առ տակաւ պիտի ձեւաւորւէր ոչ միայն քրիստոնէական դժակոյք մը, այլեւ հայ բանն ու երաժշտութիւնը, նկարչութիւնը ու նարտարապետութիւնը պիտի հարըստանային հոգեմտաւոր նոր բովանդակութեամբ, գեղարուեստական վերանորոգ ոճերով եւ իմացական ինքնուրոյն դիմագիծով: Բարին, գեղեցիկը, ազնիւը, նշանակալից փառաբանող լուսապաշտ ու լուսերգակ աշխարհահայեացքով մը, որ իբրեւ վարդապետութիւն եւ նկարագիր՝ իր հատու երանգովն ու դրոշմով պիտի կնքէր հայ գրականութեան, գեղանկարչութեան, նարտարապետութեան, երաժշտութեան եւ նոյնիսկ քաղաքի արուեստներուն մէջ փայլած շարք մը բացառիկ ծնունդներու գործերը: Այն աստիճան, որ քրիստոնէական երանգը պիտի դառնար հայ հոգիի եւ արուեստի մայր գիծերէն մէկը, իսկ Բեթղեհէմեան պարզ ու ժուժկալ կերպարները՝ հայ արուեստի գլխաւոր յատկանշաներէն մէկը: Ահա թէ ինչու, բացառող ամէն արշալոյսի հետ, հայ մարդուն հոգիին մէջ վերստին կը ծնի ճշմարտութեան Արշալոյսը եւ Մարդեղացեալ «Նոր Արքան» աւելի լայն կը տարածէ իր թագաւորութեան բազմախորհուրդ ծիսածանը:

Ս. ԿԵՐԱՎՈՍԵԱՆ

ԲԵԹՂԵՀԻՄ՝ ՍԻՐՈՅ ԶԱՌԱԳԱՅԹՈՒՄԸ

Աստուծոյ սէրը անասման է, ժամանակ ու պայման չի ճանչնար: Ան ներկայ է նո՛յնիսկ երբ մեղքով ու չարիքով շղթայուած մարդը գայն չի տեսներ: Աստուծոյ յիշատակը անորան ծանօթեցնում էր ինչպէս Աստուած ինքզինք չյայտնէր մարդուն: Առաքելը կ'ըլէ՛ «Ո՛չ զի մեք սիրեցէ՛ք Աստուած, այլ զի նա՛ սիրեց զմեզ» (Ա. ՅՈՒԿ. 4, 10):

Սէրը կեանք է. սէրը ինքնընծայում է: Այսպէ՛ս է սէրը Աստուծոյ: Այսպէ՛ս սիրեց Աստուած մարդը: Ու այսպէ՛ս ուրեքն որ մարդ սիրէ իր Արարիչը եւ իր նմանը: Բեթղեհէմի խորհուրդը աստուածային սիրոյն ամբողջական, գերագոյն ու շօշափելի յայտնութիւնն է մարդուն: Աստուած իրմէ բան մը չտուեալ մարդուն, այլ ինքզինք ամբողջութեամբ տուեալ մարդուն: Բեթղեհէմի խորհուրդը՝ որպէս Աստուծոյ ինքնընծայում մարդուն, կենդանի վկայութիւն մըն է այն անչափելի սիրոյն, զոր Արարիչը ունի արարածին հանդէպ: Ար-

դարեւ, սէրը Աստուած մարդ կը դարձնէ. երկիրը երկրին կը մօտեցնէ. անհունը հունաւորին կը միացնէ: Աստուծոյ սէրը, որպէս Աստուծոյ ինքնուրոյն յայտնութիւնը ու ինքնընծայումը, իրեն իբրեւ նպատակ ունի ազատագրումը մարդուն նո՛յնիսկ խաչի մահով:

Սիրելը դիւրին չէ. ան ամբողջական յանձնառութիւն, կենդանի գոհողութիւն, անանձնական նուիրում ու նո՛յնիսկ գիտակից նահատակութիւն կ'ենթադրէ: Մարդեղացեալ Աստուած գերագոյն սիրոյ մասնէն վաւերական օրինակն է: Ո՛չ միայն «սիրեցէ՛ք զիրար» ու նո՛յնիսկ «սիրեցէ՛ք ձեր թշնամին» ըսաւ ան, այլ ինքն անհունօրէն սիրեց մարդը. իր կեանքն ու գործը յաւերժական սիրով ճառագայթումը դարձան:

Սակայն Սիրոյ Առաքելն էր իր սէրը աննպատակ ու սոսկ զգացական երեւոյթ մը չէր: Սիրոյ նպատակը «մահացած» մարդուն վերականգնումն էր, չարին ու մահուան նուաճումն էր: Այլ խօսքով, Յիսուս սիրեց մեղաւոր մարդը՝ զայն մեղքի ճիրաններէն ազատելու համար: Ան սիրեց իր թշնամին՝ զայն

ճշմարտութեան ճանապարհին բերելու համար: Հետեւաբար, սիրելը քրիստոնէական հասկացողութեամբ ո՛չ զգացական ապրում է, ո՛չ տկարութեան ցուցանիշ է եւ ոչ ալ պարագայական վիճակ մը: Սիրելը ամուր կեցուածք ու գիտակից ինքնընծայում կ'ենթադրէ. այսպէս սէր չէ՛: Երբ մեր սէրը իր բխումը կ'առնէ Մարդեղացեալ Սէրէն, երբ մեր սէրը իր ճառագայթը կը ստանայ Բեթղեհէմէն, այն ատեն մեզ կ'այլափոխէ, կը հօգորացնէ՝ դառնալով չարը ու մեղքը յաղթող, ճշմարտութեան ու արարչութեան համար մեզ պայքարի մղող աստուածային ուժ:

Աստուծոյ Որդին սէրը կեանքով թարգմանեց, պայքարով կենսագործեց, իր արիւնով կնքեց: Բեթղեհէմը կենդանի հրաւիր մըն է ուղղուած իւրաքանչիւր հայուն՝

ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ (1990)

Դարեր առաջ, շատ առաջ, Բեթղեհէմի դաշտերում իրենց հոտի պահպանման պարզ ու խոնարհ հովիւներ Զարմանքով լի դիտեցին աստղն անսովոր երկնքում, Մինչ հրեշտակներն հնչեցրին մեծ աւետիսն երկնային:

«Խաղաղութիւն երկրի վրայ, փառք երկնքում Աստուծու, Եւ մարդկանց մէջ՝ հաճութիւն», պատգամն այս էր ամէնքին. Հասարակ շեփոյն հնչեցրին, փառաբանանք երգեցին, Զեան պէս աշխարհը ծածկեց շնորհն անաս, երկնային:

Մանկացել էր ինքն Աստուած Բեթղեհէմի մուրում, Մխիթարանք էր բերել նա յուսաբեկ սրտերին, Սէր էր բաշխել իբր ականգ՝ ցանկանալով, որ նրանք Սիրեն ոչ լոկ ընկերոջ, այլ՝ թշնամուն նենգ, անարգ:

Գիշերուայ սահն անոցած՝ հովիւները դիտեցին Դէպի քաղաքն Բեթղեհէմ, դէպի մուրում լուսն, Ուր Փրկիչն էր լուռ ննջում՝ խանձարուրով պարուրած, Եւ սիրակաթ ծնողներն հսկում էին շնորհապարդ:

Արդարութեան պատգամով, խաղաղութեան դրօշով, Ծնունդ Փրկիչն աշխարհի խոնարհութեան քարոզով, Եւ նա դարձաւ անմահ խօսք, կորուսեալին լոյս դարձաւ, Դարձաւ հրաշք անսովոր եւ մանանայ երկնաւոր:

Իրեւ նշան իր սիրուն՝ տածած համայն մարդկութեան, Խաչի վրայ նա հեղեց թանկ արիւնն իր փրկարար, մահուան վճիռը պատեց, Աստուծոյ եւ մարդկութեան միջեւ նա ուխտն իր կնքեց:

Աչքերս երկինք եմ յառել եւ օգնութեան աղերսով, Որ աստղն երկնի յայտնուի երկրորդ անգամ իր ցոլքով, Մեր խաւարը վերածի լուսաճաճանչ ցերեկի, Փոխան նրա մանկանայ մարդկութիւնը նոր դարի:

ՆԵՐՍԵՍ ՎԱՆԱԿԱՆ

Ծար.ը՝ էջ 8

ՏԵՂԵԿԱՏՈՒԱԿԱՆ ԱՐՆԵՍՏԱԳԻՏՈՒԹԻՒՆ


ՀԱՄԱԿԱՐԳԻՉ

ՀԱՄԱՑԱՆՑ

ՀԱՂՈՐԴԱԿՅՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԱՇԽԱՐՀ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՄԵՐԻԿԵԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԿԱՅՔԸ



Հայաստանի Ամերիկեան Համալսարանի (էյ. Եու. էյ.) կայքը սպառնիչ տեղեկություններ կը ներկայացնէ Համալսարանին մասին, ինչպէս նաեւ մանրամասնօրէն կը պարզէ դիմումագիրներ ներկայացնելու պայմաններն ու դասաւանդումը նիւթերը:

Կայքին «էյ. Եու. էյ.» մասին» բաժինը կը ներկայացնէ Հայաստանի մասին տեղեկություններ, ակադեմիական տարուան օրացոյցը, դասաւանդուող նիւթերը, Համալսարանին կանոնները եւ պատմությունը: «Համալսարան ընդունման», «ակադեմիական», «վարչական» եւ «գործարաններ» բաժինները աւելի եւս կը մանրամասնեն Համալսարանին Համակարգը, անոր գանձազան բաժանմունքները, աշխատանքները եւ Համալսարանական կեանքը ընդհանրապէս:

Անգլերէնով պատրաստուած այս կայքը ունի նաեւ փնտրողի բաժին եւ կայքին քարտէսը: Հայաստանի Ամերիկեան Համալսարանի կայքին Հասցէն է՝ www.ava.am:

ՍՈՒՏԵՐ ԲԱՅԱՅԱՅՏՈՂ ՆՈՐԱԳՈՅՆ ՍԱՐՔԸ

Սեպտեմբեր 11ի ահաբեկչական արարքներէն ետք մարդոց անվտանգութիւնը ապահովելու ճիգերը բազմապատկուեցան եւ իբրեւ արդիւնք՝ զարկ տրուեցաւ ահաբեկիչներ եւ կասկածելիներ բացառելու աշխարհի միջոցներու, որոնց կարգին՝ գերարդիական սարքերու օգտագործման: 2002ի առաջին օրերուն Հրապարակուած տեղեկություններ ներկայացուցին նորագոյն սարք մը, որ ենթականերու սուտերը կը բացայայտէ: Մարդոց դէմքերը գնդով գերզգայուն այս սարքը կը կարողանայ զոյգին փոփոխութիւններ, որոնք կը կատարուին անհատին դէմքին վրայ, երբ ան կը ստէ:

Սարքին առաջին փորձարկումները կատարուեցան ամերիկեան բանակի 20 զինուորներու հետ, որոնցմէ 8ին պարտականութիւն տրուեցաւ 20 տղարնոց թղթադրամներ գողնալ: Ապա փորձարկումին 20 մասնակիցները ենթարկուեցան հարցաքննութեան, ուր 8 «գող»երը ըսին, թէ իրենք գողութիւն չեն կատարած: Սուտերը բացայայտող սարքը յաջողեցաւ արձանագրել «ստախոս գող»երէն 6ին դէմքերուն եւ յատկապէս աչքերուն շուրջի թեթեւ կարմրութիւնը:

«Մայօ քլինիք»-ի գիտնականներ ողջունեցին այս նոր գիտութիւնը, զայն նկատելով կարեւոր քայլ՝ օգտակարներու մէջ ահաբեկիչներ բացառելու համար: Միւս կողմէ, սակայն, այլ գիտնականներ հարցականի տակ առին սարքին գործնականութիւնը, դիտել տալով, որ փորձարկումները կատարուած են փոքրածիւր անձերու վրայ: «Իրենց գիտութիւնը հետաքրքրական է, սակայն անոնց համար դժուար պիտի ըլլայ փաստել, թէ գիտութիւնը յաջողութեամբ պիտի կարենայ մեծ թիւով մարդոց դէմքերը գնել», ըսաւ հոգեբանութեան դասախոս մը:

Ա Յ Ի Լ

ԻՆՔՆԱՇԱՐԺԻ ԱՊԱՆՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

85\$

●SOS FREE OF CHARGE
ԻՆՔՆԱՇԱՐԺԻ ՓՈՒՍԱՂՈՒԹԵԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒԹԻՒՆԸ ՉՐԻ

ՀԱՍՅԷ. ԱՅԷՏԻ ԾԵՆԸ Բ. ՅԱՐԿ
ՀԵՌ. 01-242556 եւ 01-242557

ԾԱԾԿԱԳԻՐ. ՀԱՄԱԿԱՐԳԻՉՆԵՐՈՒ «ԲԱՅՈՒԷ՛ ՈՎ ՍԵՉԱՄ»Ը

Համակարգիչն ու համացանցը օգտագործողները յաճախ կը գտնուին ծածկագիր (password) գործածելու ստիպողութեան տակ: Ե-նամակի հասցէներ, էլեկտրոնային «քրետիք»-ներ եւ համացանցի վրայ այլ բաժանորդագրութիւններ կատարելու համար արձանագրութեան անուն (Sign-in name) եւ ծածկագիր ունենալը պայման է: Եւ որովհետեւ արձանագրութեան անունը կը ընտրուի ծանօթ կրնայ ըլլալ, ծածկագիրին գաղտնի ըլլալը ենթակային անձնական տեղեկությունները պահպանող միակ գրաւակներ կը հանդիսանայ:



Սակայն որեւէ բառ կամ թիւ իբրեւ ծածկագիր օգտագործելը բաւարար չէ անձնական տրեւելիներու գաղտնապահութիւնը երաշխաւորելու համար: Ճարտար «հէքըր»ներ կրնան գուշակել անհատներու ծածկագիրները, իսկ համալսարաններուն անունները կրնան բառարաններու օգտագործումով առաւելագոյնը քանի մը ժամանակ մէջ քակել զործարկուած ծածկագիրները:

Հոգեբաններու կատարած ուսումնասիրութիւնները ցոյց կու տան, որ ծածկագիրները, որ իրենց տէրերուն նման, ընդհանրապէս կրնան նախատեսելի ըլլալ: «Երբ կը խորհիս չէ՞զոք բառ մը իբրեւ ծածկագիր գործածելու մասին, անձնական տեղեկութիւնը արտայայտող բառն է, որ միտքը կու գայ», կ'ըսէ Լոնտոնի Սիթի Համալսարանի մարդահամակարգիչ յարարութեան նիւթին դասախոս Հելեն Փեթրի:

Մարդիկ ծանօթ բառեր եւ թիւեր կ'օգտագործեն, որպէսզի չմոռանան:

նան իրենց ծածկագիրները: Բրիտանական ընկերութիւններու 1200 պաշտօնեաներու հետ վերջերս կատարուած հարցախոյզ մը ցոյց տուաւ, որ անոնց կէսը իրենց հարցատներուն անունները եւ ծանօթ բառերը կ'օգտագործէին: Այլ ուսումնասիրութիւններ ցոյց կու տան, որ «Աստուած», «Մայր», «Երեմ» եւ «Գրք» բառերը նոյնպէս յաճախ կ'օգտագործուին իբրեւ ծածկագիր: Այսպէս, օրինակ, www.bargaindog.com հասցէով էլեկտրոնային առեւտուրի կայքը օգտագործողներուն մօտ միւսերէն շատ օգտագործուող ծածկագիրը «սէր»ն է: Կայքը մեծ ժողովրդականութիւն կը վայելէ յատկապէս միջին տարիքի կիներու մէջ...: Միւս կողմէ, աւելի բրիտանացի տարիքի համակարգիչ օգտագործողներ յաճախ իբրեւ ծածկագիր կ'որգործեն ինքնապատշաճ բառեր:

Կինք փառաբանող բառեր, ինչպէս՝ «աստուածուհի», «հանճար» եւ «գեղեցկուհի»: Այս յատկանշական երեւոյթին անդրադառնալով՝ Հելեն Փեթրի կ'ըսէ. «Հակառակ նոր ծածկագիրները ենթադրաբար գաղտնի պէտք է ըլլան, կարծէք մարդիկ կը փորձեն իրենց ծածկագիրներուն միջոցով ցուցամուտութիւն ընել»: Ուշագրաւ է նաեւ, որ մարդիկ յաճախ «գաղտնի» կամ «ծածկագիր» բառերը իբրեւ ծածկագիր կը գործածեն եւ կամ միեւնոյն ծածկագիրը կը գործածեն տարբեր բաժանորդագրութիւններու եւ Ե-նամակի հասցէներու համար: Այս բոլորը կը դիւրացնեն անձնական տեղեկություններ փնտրող, գրամատնային հաշիւներէ գողութիւն կատարող կամ պարզապէս վնաս հասցնել փառքը: «հէքըր»ներու գործը: Իրենց նպատակին հասնելու համար վերոնշեալ կէտերը շահագործելու «հէքըր»ներու փորձերը, երբ պարզիւն դուրս կու գան, անոնք կը դիմեն այսպէս կոչուած «պրոթ ֆորս» (կոպիտ ուժ) համակարգիչ գողութեան ծածկագիրներու շահագործմանը: Համակարգիչ օգտագործողներ յաճախ կը մտածեն, թէ իրենց համակարգիչն գողցուելէ քան չկայ եւ՝ հետեւաբար, ուշագիր կերպով չեն ընտրել իրենց ծածկագիրները: Սակայն «հէքըր»ներու նպատակը միայն տուեալ համակարգիչ մը «կողոպտել»ը չէ: Անոնք «գոհ»ին համակարգիչը կրնան օգտագործել այլ համակարգիչներու վրայ յարձակելու համար:

Անձնական տեղեկություններ «հէքըր»ներուն հասողութեան կարելի եղածին չափ հեռու պահելու լաւագոյն ձեւը թիւերու եւ գիրերու խառնուրդով ծածկագիրներն են: Անոնք քանակապէս քանակապէս կարգով (երկու կամ երեք շարքով) անգամ մը փոփոխութեան ենթարկելն է:

Yerevan

Armenian products
Gifts For Any Occasion

Address : Bourj Hamoud, Municipality Street, Facing Center Arinc, # 63 Street Fax: 01/254747
Tel.: 01/254747 - 03/348105, E-mail: tammy@lynx.net.lb

www.hamazkayin.com

www.lemagan.com

ՆՈՐ ԳԻՏԵՐ ԻՆՔՉԻՆՔ ՇԱՐՈՂ ԻՆՔՆԱՇԱՐԺԸ

«Սիմընգ»-ի Բրիտանիոյ Ռոք Մէնըր շրջանի ուսումնասիրական կեդրոնը վերջերս ցուցադրեց ինքզինք շարող ինքնաշարժ մը: Շարելու վայրը ճշդելէ ետք վարորդը դուրս կու գայ ինքնաշարժէն եւ ինքնաշարժը կը կատարէ շարելու գործողութիւնը՝ օգտագործելով 16 փոքր քամերաներ եւ «ոտար»ներ, որոնք «աչքէ կ'անցնեն» շարուելիք տեղը եւ ուշագրութեամբ նկատի կ'առնեն խոշորագոյնները: Վերջապէս ինքնաշարժին մէջ գտնուող յատուկ համակարգիչ մը ինքնաշարժը կ'առաջնորդէ ճշգրտած տեղը:

ԱՐՇԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ


«ՓԼԷՔՍՈՒԱՅԹԸՐ ԷՍ. 88 ԹԻ. ԵՈՒ» ԱՄՓՈՓ ՍԿԱԻԱՌԱԿՆԵՐ ԱՐՁԱՆԱԳՐՈՂ ՍԱՐՔԸ

Ամփոփ սկաւառակներ արձանագրող փոխարկելի սարքեր (Մի.Տի. Փլէյթըր) շուկայի վրայ են շուրջ երկու տարիէ ի վեր: «Եու. է. Պի.» գրութիւնը օգտագործող «Մի.Տի. Փլէյթըր»ներու նորագոյն սերունդի ներկայացուցիչներէն է «Փլէքսոյթըր ԷՍ. 88 Թի. Եու.»-ն, որ ունի 8x արագութիւն եւ «Մի.Տի.»-ներ կ'արձանագրէ նուազ քան տասը վայրկեանի ընթացքին: Սարքը, որ կ'արժէ շուրջ 350 տոլար, կը յատկանշուի իր բարակութեամբ եւ թեթեւութեամբ, ինչպէս նաեւ՝ իր բարձրորակ աշխատելու ունակութեամբ:



«ՖՈՒՑՈ ՓԻ. ՍԻ. 2100 ՁԻ.» ԹՈՒԱԳՐԱՅԻՆ ՔԱՄԵՐԱՆ

Թուագրային լուսանկարչական գործիքներու արհեստագիտութեան արտականչական նորութիւններէն մէկն է «Ֆուսո փի. Սի. 2100 Ձի.»-ն, որուն օգտագործման ձեւը դիւրին է, իսկ լուսանկարներուն յատկութիւնը շատ լաւ: Ան օժտուած է 5x տեսողական - թուագրային «գուլմ»ով: Այս սարքով յատկ լուսանկարներ կարելի է ունենալ նոյնիսկ երբ կիսամութ տեսարաններ կը լուսանկարուին: Սարքը կ'արժէ շուրջ 500 տոլար:



ՆՈՐ ԵՐԱԳԻՐՆԵՐ

«ՍԵՐԻՖ ՏՐՕ ԷՆՏ ՏԻՉԱՅՆ»

«Սերիֆ» ընկերութեան (www.scrip.com) նորագոյն արտագրութիւններէն «Տրօ Էնտ Տիգայն» համակարգչային ծրագիրը գծագրութեան եւ ձեւաւորումի կարեւոր ծրագրերէն մէկը կը հանդիսանայ: Ծրագիրը կ'ընձեռնէ բազմապատկուած կարելիութիւններ եւ գծագրութեան գերարդիական միջոցներ, սակայն տակաւին որոշ չափով ետ կը մնայ «Ատոպ Իլսաթէյթըր» ծրագրից, թեւեւ ան շատ աւելի մատչելի է (շուրջ 120 տոլար), քան «Իլսաթէյթըր»ը:



Պատրաստեց՝ ԽԱՉԻԿ ՍՈՒՐԱՏԵԱՆ

ԱՆՈՒՇԱԿԱՆ ՍԱՐԳԻՍ

Տօնական օրերու խրախճանքի ձեռք սեղանները ձոխացուցէք համեղ անուշեղէններով

ԱՐԱՍՍ ՓՈՂՈՑ
ՊՈՒՐԵ ԲԱՍՈՒՏ ԲԵՌ. 261475

Մանկապատանեկան


ՃԱՓՈՆԻ ՄԷՋ

ՏԱՐՈՒԱՆ ԱՌԱՋԻՆ ԳՐՈՒԹԻՒՆԸ

Քուրումի 7 տարեկան է: Ան կ'ապրի հեռավոր ծափոնի մէջ: Ան նախակրթարանի աշակերտուհի է եւ դպրոցին մէջ կը սորվի կարգալ, հաշուել եւ ինքնահոսով ու վրձինով գրել:

Վրձինով գրել: Սակայն մենք վրձինով կը ներկենք:

Ճափոնցի աշակերտները կը սորվին «ներկուած» գրութիւններ գծել: Այդ գրութիւնները կը կոչուին «շոտո»:




Յունուարի սկիզբը ճափոնցի բոլոր պատկերները «շոտոն» կը տօնեն: Ան տարուան առաջին գրութեան տօնն է, «քաքիզոմը»:

Քուրումի կը սիրէ այս տօնը, որովհետեւ ան շատ կը սիրէ գեղագրութիւնը:

Դասարանին մէջ ուրիշ իրենց գրչատուփերէն՝ սուղուրիպաքոյնն ներուն համար, եւ բարակ մը՝ ստորագրութեան համար:

Ճերմակ թուղթին առջեւ ծունկի եկած՝ Քուրումի կ'առնէ հաստ վրձինը:

Ան վրձինը կը բռնէ մատներուն ծայրով, մէջտեղէն: Ան զգուշութեամբ կը սկսի գծել «հաստու հինոտ» կոչուած բանաստեղծութեան մը սկիզբի առաջին նշանները: «Հաստու հինոտ» կը նշանակէ՝ «Արեւուն առաջին երեւնալը»:



Սուղուրի պատրաստած է մելանը: Պատկերները կը հանեն երկու վրձիններ. հաստ մը՝ գրութիւնները:

ՔԱՔԻՉՈՍ ՄԸ ԻՐԻԵՒ ՆՈՒԷՐ

Եթէ կ'ուզես, դուն ալ կրնաս, Քուրումի նման, նուէր մը պատրաստել այս Նոր Տարուան համար եւ վերամուտին հետոյ դպրոց տանիլ ու զայն դասարանին պատէն կախել:

Պէտք ունիս 20 սմ. x 42 սմ. ճերմակ թուղթի կտորի մը: Վրան գրէ այս սինակին մէջ դրուած օրինակին հետեւելով:

Կրնաս գործածել ջրաներկի վրձին մը, սեւ մելան կամ ջրաներկ:

Սպասէ, որ մելանը լաւ չորանայ: Ապա թուղթին երկու կողմերը ծալլէ եւ փակցուր ցպիկի մը վրայ: Վերի ցպիկին երկու ծայրերէն կարմիր ժապաւէն մը կապէ: Այս ձեւով կրնաս գեղագրութիւնդ պատէն կախել:

ՀԱՅ ԵՓԵՆՔ

Փունճն ելած տաք - տաք հացը շատ համով է: Դուն ալ կրնաս փռապան դառնալ եւ թխել համով հացեր: Սակայն, պարզ հացի փոխարէն, փորձէ այս տարբերակները:

ՀԱՄԵՄՆԵՐՈՎ ՀԱՅ

Պէտք ունիս - 4 դգալ մեղր, 250 կրամ ալիւր, 125 կրամ շաքար, 1 գաւաթ գաղղ կաթ, 1 հաւկիթի դեղնուց, 1 դգալ անիսոնի հատիկներ, քիչ մը գնդիկ թթիմոր:

Բոլոր նիւթերը մեքենայով իրարու հետ խառնէ: Ձգէ, որ խմորը հանգչի մէկ ժամ քու ընտրած կաղապարի մէջ: Ապա փուռին մէջ եփէ 1/2 ժամ:

ՊԱՆԻՐՈՎ ՀԱՅԻՎՆԵՐ

Պէտք ունիս - 450 կրամ ալիւր, 1 դգալ մանանեխ (մուրաբա), 150 կրամ տաշուած պանիր, քիչ մը գնդիկ թթիմոր, 30 սանթիլիթր գաղղ ջուր եւ աղ:

Բոլոր նիւթերը խորունկ մեծ ամանի մը մէջ իրարու խառնէ: Մէջտեղը փոս մը ըրէ: Աւելցուր ջուրը եւ շաղէ:

Ձգէ, որ խմորը ուռի մէկ ու կէս ժամ: Խմորով պզտիկ գունդեր պատրաստէ: Ձգէ, որ անոնք ուռին 45 վայրկեան: Ձանոնք տաք փուռին մէջ եփէ 40 վայրկեան:

Եթէ շատակեր ես, կրնաս խմորին մէջ աւելցնել խոզապուխտ (ժամպոն), սոււնկ, ընկոյզ, եւ այլն:




Իրարու խառնէ: Մէջտեղը փոս մը ըրէ: Աւելցուր ջուրը եւ շաղէ:


Ձգէ, որ խմորը ուռի մէկ ու կէս ժամ: Խմորով պզտիկ գունդեր պատրաստէ: Ձգէ, որ անոնք ուռին 45 վայրկեան: Ձանոնք տաք փուռին մէջ եփէ 40 վայրկեան:

Եթէ շատակեր ես, կրնաս խմորին մէջ աւելցնել խոզապուխտ (ժամպոն), սոււնկ, ընկոյզ, եւ այլն:

Ի՞ՆՉՊԷՍ ԿԸ ԲԱՆԻ ԼՈՒՍԱՆԿԱՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԻՔ ՄԸ




Երբ դուն նկար մը կը նկարես, գործիքն «աչքին» ետեւը պզտիկ պատուհան մը կը բացուի եւ կը գոցուի ակնթարթի մը մէջ: Այս կարծ ժիւղցին, լոյսը կը մտնէ գործիքի մէջ եւ նկարածը ժապաւէնին վրայ կը ցուցցուի, ինչպէս՝ հայելիի մը վրայ:




Բաց գոյները «ճեկաթի»-ին վրայ աւելի մուք կ'երեւին:

Նկարի մը ժապաւէնը ծածկուած է լոյսէն ազդուող նիւթով մը: Որքան անոր վրայ ցուցցող պատկերը բաց գոյնով ըլլայ, այնքան ժապաւէնը կը սեւնայ: Այս ձեւով դուն կը ստանաս «ժխտական նկար» մը («ճեկաթի»):




Նկարելէդ ետք նկարը երեւակել պէտք է տաս: Երեւակելու համար այս «ճեկաթի» կարծ ժամանակի մը համար կը ցուցադրուի յատուկ թուղթի մը առջեւ, լոյսի աղբիւրի մը տակ: Ապա այս թուղթը կը թափախուի քիմիական նիւթի մը մէջ եւ նկարը կը յայտնուի:

ԻՆՉՈՒ ԱՍՏՂԵՐԸ ԿԸ ՓԱՅԼԻՆ ՔԻՉ ԿԱՄ ՇԱՏ



Գոյուրին ունիս բազմաթիւ աստղեր: 1 - Արեւ, 2 - Սիրիուս, 3 - Փրոսիոն, 4 - Վեկա, 5 - Անթարտա:

Աստղերը կրակ առած կազի հսկայական գունդեր են, որոնք տաքութիւն եւ լոյս կ'արձակեն: Արեւը աստղ մըն է:



Վեկան (2) Փրոսիոնն (2) աւելի լուսաւոր է: Երկինքին մէջ Վեկան աւելի կը փայլի:


Գոյուրին ունիս արեւէն հազարաւոր անգամ աւելի մեծ աստղեր եւ անկէ շատ աւելի պզտիկներ: Կարգ մը աստղեր դեղին են, ուրիշներ՝ կարմիր կամ կապոյտ: Աստղերուն փայլքը կախուի է անոնց չափէն եւ գոյնէն:

Կարգ մը աստղեր երկրագունդին մօտ են, ուրիշներ շատ հեռու են: Մենք հագիւ կը տեսնենք այդ ամէնէն հեռաւոր աստղերը, մինչ անոնք, որոնք երկրագունդին աւելի մօտ են, կարծէք շատ աւելի զօրաւոր կը փայլին: Հետեւաբար աստղերուն փայլքը աւելի զօրաւոր կամ տկար կ'ըլլայ՝ ըստ երկրագունդէն անոնց ունեցած հեռաւորութեան:


Ժ Ա Մ Ա Ն Յ



Կրնաս գտնել 2 պատկերներուն միջեւ գոյուրին ունեցող 8 տարբերութիւնները:



Կրնաս ներկել թիւերուն հետեւելով: 1 - դեղին, 2 - նարնջագոյն, 3 - կարմիր, 4 - սրճագոյն, 5 - կապոյտ, 6 - կանաչ:



Կրնաս գտնել վերի ձախ ամկուծի կղզիին դիրքը վարի քարտէսին վրայ:

Jeunesse
Elegance
Prestige
Art


HABILLEMENTS

PRES MUNICIPALITE DE BOURJ-HAMOUD. RUE TRIPOLI

Պատրաստեց՝ ՇՈՂԻԿ ՏԵՐ ՂՈՒԿԱՍԵԱՆ

www.homenetmencl.com

Մ Ա Ր Զ Ա Կ Ա Ն - Ա Շ Խ Ա Կ Ի Ն



ԼԻԲԱՆԱՆԻ ՊԱՍԲԵԹՊՈՒԼԻ ԱՆՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ

ՎԱՂԸ՝ Դ. Ս. Ը. Ս. - ՊԼՈՒ ՍԹԱՐԶ

Լիբանանի պասբեթպոլի աղջկանց Ա. դասակարգի ախոյեանություն 12րդ հանգրուանի մրցումներուն, վաղը՝ Կիրակի, < Մ. Ը. Ս. Ի «Թնճուկեան» մարզադաշտին վրայ, < Մ. Ը. Ս. Ի ներկայացուցչական կապը կը հիւրընկալէ Պու Սթարզը:

Մրցումը տեղի կ'ունենայ ժամը 18:00ին: Նախկին երկու հանդիպումները՝ երկու խումբերուն միջև վերջ գտած են < Մ. Ը. Ս. Ի յաղթանակով: Առաջինին, < Մ. Ը. Ս. արձանագրեց 69 - 35 արդիւնքով յաղթանակ մը, իսկ երկրորդին՝ 74 - 54 արդիւնքով յաղթանակ մը: Նշենք, թէ < Մ. Ը. Ս. Ի ներկայացուցչական կապը ցարդ արձանագրած է հինգ յաղթանակ եւ կրած՝ վեց պարտություն:

Նշենք, թէ այս մրցումը < Մ. Ը. Ս. Ի երկրորդ երթի 2րդ մրցումն է: Ա. դասակարգի ախոյեանություն մրցումները այս տարի տեղի կ'ունենան երկու անգամ երթուղարձի դրութեամբ:

Աղջկանց Բ. դասակարգի ախոյեանություն 10րդ եւ դարձի 3րդ հանգրուանի մրցումներուն, < Մ. Ը. Ս. Ի երկու կապերը՝ Պէյրուք եւ Պուրճ Համուս վաղը՝ Կիրակի մրցում չունին կատարելիք, որովհետեւ անոնց կատարելիք մրցումները, յետաձգուեցան յառաջիկայ երեք-չարթի օրուան՝ Ս. Ծննդեան տօնին առիթով: Պէյրուքի մրցակիցն էր Ռիատի Պէյրուք, իսկ Պուրճ Համուսինը՝ Շապապ Ռիատի:

Տղոց Բ. դասակարգի ախոյեանություն գծով, < Մ. Ը. Ս. Ի ներկայացուցչական կապը, իր կարգին շաբաթավերջին մրցում չունի կատարելիք: 18րդ հանգրուանին, անկիս յառաջիկայ Չորեքշաբթի, 9 Յունուարին Բահրապայի դաշտին վրայ, կը ճակատի Ահիսա Ռիատայի դէմ, ժամը 21:00ին:

ՍՊԱՆԻՅԱՆ ՖՈՒԹՊՈՒԼԻ ԱՆՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ

ՈՒՆԱԼ ՄԱՏՐԻՏ ՊԻՏԻ ԳՐԱԿԷՐ ՊԱՐԱԳԼՈՒՄԻ ԴԻՐՔԸ

Սպանիոյ ֆուտպոլի ախոյեանություն 19րդ եւ երթի վերջին հանգրուանի մրցումներուն, գագաթի ճակատումը տեղի պիտի ունենայ այսօր, «Սանթիակո Պէննայէօ»-ի մէջ, ուր Ռեալ Մատրիտ պիտի հիւրընկալէ Տեփորթիօ Քորուսան: Մայրաքաղաքի կապը, որ այժմ միայն մէկ կէտի տարբերութեամբ ետ կը մնայ Տեփորթիոյն, յաղթանակի մը պարագային պիտի գրաւէ պարագլուխի դիրքը եւ երթի մրցումները պիտի աւարտէ պարագլուխի դիրքին վրայ: Իր կարգին, Սելթա Վիլո (3րդ) յոյս ունի գրաւելու պարագլուխի դիրքը, եթէ յաջողի պարտություն մատուցի իր հիւրը՝ վերջին դիրքը գրաւող Ռայօ Վալեքանոն, սակայն այն պայմանով, որ «Պէննայէօ»-ի մէջ տեղի ունենալիք մրցումը վերջ գտնէ հաւասարութեամբ:

Ցրդ դիրքը գրաւող Պարսելոնա, որ այժմ վեց կէտով ետ կը մնայ Տեփորթիօ Քորուսայէն, «Նուքամի»-ի մէջ պիտի հիւրընկալէ Ռեալ Սարակոսան (12րդ): Պարսա, որ իր կատարած վերջին վեց մրցումներուն արձանագրած է միայն մէկ յաղթանակ, պիտի փորձէ արձանագրել եղանակի իր ցրդ յաղթանակը: Մարչիչ Քարլէս Ռեքսաչ յոյսով է, որ Ռիվայտոյի եւ Լուիս Էնրիքէի վերադարձը (նախապէս վիրաւոր), իր յաւանդարձը պիտի ունենայ խումբին արձանագրելիք արդիւնքին վրայ:

Ցարդ միայն երկու պարտություն կրած Վալենսիա, որ կը գրաւէ 7րդ դիրքը՝ երեք կէտով ետ մնալով Լա Քորուսայէն, հիւրը պիտի ըլլայ Ռեալ Պէթիսի: Ցարդ ամենէն աւելի շատ հաւասարություն արձանագրած (ինը) Վալենսիա, այս եղանակին օտար դաշտի վրայ յաղթանակ չէ կրցած արձանագրել ցարդ:

Ստորեւ՝ 19րդ հանգրուանի մրցումներուն յայտագիրը (ժամերը պէտք է նկատի ունենալ Պէյրուքի ժամով):

ՕՅՍՕՐ	ԺԱՄ
Սելթա Վիլո - Ռայօ Վալեքանօ	18:00ին
Վիարէալ - Սելիլլա	18:00ին
Ռեալ Մատրիտ - Տեփորթիօ Քորուսա	22:30ին
Լաս Փալմաս - Ռեալ Սուրբտատ	23:00ին
ՎԱՂԸ	
Սլաւէս - Օսասունս	18:00ին
Սթիքիքօ Պիլլաօ - Թեներիֆէ	18:00ին
Մալալկա - Էսփանիոլ	18:00ին
Ռեալ Պէթիս - Վալենսիա	18:00ին
Ռեալ Վալադոլիտ - Մայորքա	18:00ին
Պարսելոնա - Ռեալ Սարակոսա	21:00ին

ԼԻԲԱՆԱՆԻ ՖՈՒԹՊՈՒԼԻ ԱՆՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ

ՎԱՂԸ՝ ԱՆՍԱՐ - Շ.Ս.Ը.Ս.

Լիբանանի ֆուտպոլի ախոյեանություն 5րդ հանգրուանի մրցումներուն, վաղը՝ Կիրակի, կէսօրէ ետք ժամը 2:15ին, < Մ. Ը. Ս. Ի ֆուտպոլի ներկայացուցչական կապը Պէյրուքի Քաղաքապետարանի դաշտին վրայ կարեն մրցում մը ունի կատարելիք Անսարի դէմ:

< Մ. Ը. Ս. Ի ցարդ իր կատարած 4 մրցումներէն երկուքը աւարտած է հաւասարութեամբ, իսկ երկուքը՝ պարտութեամբ: Հետեւաբար եղանակի առաջին յաղթանակը պիտի ըլլայ շատ կարեւոր, մանաւանդ, որ Ս. Ծննդեան տօնին առիթով < Մ. Ը. Ս. Ի իր յաւանդին նուէրը տուած պիտի ըլլայ իր համակիրներուն, որոնք վստահաբար մեծաթիւ շարքերով պիտի ուղղուին դաշտ քաջալերելու համար իրենց կապը Անսարի դէմ տեղի ունենալիք մրցումին: Անոնք անկասկած որ պիտի լեցնեն թրիպիւնները, Անսարի մեծաթիւ համակիրներն ներկայութեան իրենք վերելք պարտադրելու համար:

Թէեւ Անսարի արձանագրած արդիւնքները՝ այս եղանակին այդքան ալ փայլուն չեն, սակայն մրցակից կապը կը նկատուի զօրաւոր իր տեղացի թէ օտար մարզիկներն ներկայութեան:

< Մ. Ը. Ս. Ի ամէն գնով պիտի փորձէ եւ ոչ մէկ ճիգ պիտի խնայէ արձանագրելու համար եղանակի իր առաջին յաղթանակը:

4րդ հանգրուանին, Ռասիւնկի դէմ տեղի ունեցած մրցումին, < Մ. Ը. Ս. Ի նշանակեց եղանակի իր առաջին կողմը: Հետեւաբար 5րդ հանգրուանին անհկա պիտի պայքարի արձանագրելու եղանակի իր առաջին յաղթանակը, յաջողը հանգրուաններուն աւելի բարձր կըրովով շարունակելու համար:

Ստորեւ՝ 5րդ հանգրուանի մրցումներուն յայտագիրը:

ՕՅՍՕՐ	ԺԱՄ	ՂԱՇՏ
Պրճ - Ահլի Սայտա	2:15ին	Սաֆա
< Մ. Ը. Ս. Ի - Ահտ	2:15ին	Պ. Համուս
Նըժմէ - Սաֆա	5:00ին	Մ. Աւան

ՎԱՂԸ
Ռասիւնկ - Ահա Ալէյ 2:15ին
Սայլամ - Թ. Սուր 2:15ին
Անսար - < Մ. Ը. Ս. Ի 2:15ին
Շ. Սահէյ-Սաժէս 5:00ին
Մ. Աւան

Նշենք, թէ շաբաթավերջին կը սկսին Բ. դասակարգի ախոյեանություն մրցումները՝ հետեւեալ յայտագիրին հիմամբ (բոլոր մրցումներն ալ տեղի կ'ունենան ժամը 2:15ին):

ՕՅՍՕՐ	ՂԱՇՏ
Մապարա - Նահուա Պար Էլիսա	Ահտ
Ռ. Ուայ Իտապ - Շ. Թրիփոլի	Թրիփոլի

ՎԱՂԸ
Օլիմփիք Պէյրուք - Շեպ. Մապարա Սաֆա

Բ. ՆԱՐԱԿ
ՎԱՂԸ
Յիթիան Սայտա - Իժթիմահի Ահտ
< Մաժուայ Այնճար - Շապ. Խիսմ Խիարա
Խալահ Պրճ Շիմայի - Ահլի Մարպա Սուր

Ա. Դասակարգի 5րդ հանգրուանի մրցումներուն նախօրեակին այժմ ընդհանուր դասաւորումը կը ներկայացնէ հետեւեալ պատկերը:

	Յ.	Վ.	Պ.	Ն.Շ.	ՍՏ.	ԿԵՏ
1.- Սալամ	3	1	-	10	3	10
2.- Սաժէս	3	1	-	14	11	10
3.- Շապ. Սահէյ	2	2	-	5	2	8
4.- Նըժմէ	2	1	1	10	5	7
5.- Թատ. Սուր	2	1	1	6	2	7
6.- Պրճ	2	1	1	6	4	7
7.- Սաֆա	2	1	1	6	5	7
8.- Ահտ	1	3	-	6	5	6
9.- Անսար	1	2	1	6	6	5
10.- Ռասիւնկ	-	2	2	4	7	2
11.- Շ.Ս.Ը.Ս.	-	2	2	1	5	2
12.- Շ.Ս.Ս.	-	1	3	1	5	1
13.- Ահա Ալէյ	-	1	3	2	8	1
14.- Ահլի Սայտա	-	1	3	2	10	1

ՖՐԱՆՍԱՅԻ ՖՈՒԹՊՈՒԼԻ ԱՆՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ

ԱՅՍՕՐ՝ ՓԱՐԻԶ - Ս. Ժ. - ՄՈՆԱԲՕ ՏԱՔ ՃԱԿԱՏՈՒՄ

Ֆրանսայի ֆուտպոլի ախոյեանություն 20րդ հանգրուանի մրցումներուն, մայրաքաղաքի կապը՝ Փարիս Սէն ժերմէն, որ «Փարք Տը Փրէնս»-ի մէջ պիտի հիւրընկալէ Մոնաքոն, իր ամէն կարելին պիտի ընէ պարտութեան մատուցելու համար իր հիւրը, որ այս եղանակին օտար դաշտերու վրայ իր կատարած մրցումներուն ընթացքին արձանագրած է ձախող արդիւնքներ: Իշխանապետական կապը օտար դաշտերէ կըրցած է հաւաքել միայն մէկ կէտ:

Փարիս Սէն ժերմէն, որ այժմ տասը կէտով ետ կը մնայ պարագլուխի դիրքը գրաւող Լանսէն, անոր նման միակ խումբն է, որ կրած է միայն երկու պարտություն:

Շաբաթավերջին Լանսէն մրցում չունի կատարելիք, որովհետեւ Մէսի դէմ անոր մրցումը յետաձգուեցաւ երկու այլ մրցումներու նման, ստացած դաշտերուն պատճառով: Յետաձգուած մնացեալ երկու մրցումներն են. Սըտան - Օքսէլ եւ Թրուա - Մարսէյ:

6րդ դիրքը գրաւող Պարսօ, որ պիտի հիւրընկալէ Ռէննը (14րդ), դարձեալ

Մաւին մէջ Նըժմէ - Սաֆա (այսօր) մրցումը պիտի ըլլայ բաւական տաք հանդիպում մը, իսկ Սալամ - Թատան Սուր մրցումը (վաղը) իր կարգին պիտի ըլլայ գագաթի հանդիպումներէն մէկը:

Նշենք, թէ 5րդ հանգրուանի մրցումներուն նախօրեակին, ցարդ Սալամ, Սաժէս, Շապապ Սահէյ եւ Ահտ կը մնան աւելի պարտելի չորս խումբերը, իսկ ցարդ յաղթանակ չարձանագրած խումբերն են՝ Ռասիւնկ, < Մ. Ը. Ս. Ի., Շ. Ս. Ս., Ահա Ահլի Ալէյ եւ Ահլի Սայտա:

Ստորեւ՝ 5րդ հանգրուանի մրցումներուն յայտագիրը:	ՕՅՍՕՐ	ԺԱՄ	ՂԱՇՏ
Պրճ - Ահլի Սայտա	2:15ին	Սաֆա	
< Մ. Ը. Ս. Ի - Ահտ	2:15ին	Պ. Համուս	
Նըժմէ - Սաֆա	5:00ին	Մ. Աւան	

ՎԱՂԸ	ՏՈՒՆԻԷ	
Ռասիւնկ - Ահա Ալէյ	2:15ին	Տոնիէ
Սայլամ - Թ. Սուր	2:15ին	Թրիփոլի
Անսար - < Մ. Ը. Ս. Ի.	2:15ին	Պէյրուք
Շ. Սահէյ-Սաժէս	5:00ին	Մ. Աւան

Նշենք, թէ շաբաթավերջին կը սկսին Բ. դասակարգի ախոյեանություն մրցումները՝ հետեւեալ յայտագիրին հիմամբ (բոլոր մրցումներն ալ տեղի կ'ունենան ժամը 2:15ին):

Ս. ՆԱՐԱԿ	ՂԱՇՏ
Մապարա - Նահուա Պար Էլիսա	Ահտ
Ռ. Ուայ Իտապ - Շ. Թրիփոլի	Թրիփոլի

ՎԱՂԸ
Օլիմփիք Պէյրուք - Շեպ. Մապարա Սաֆա

Բ. ՆԱՐԱԿ
ՎԱՂԸ
Յիթիան Սայտա - Իժթիմահի Ահտ
< Մաժուայ Այնճար - Շապ. Խիսմ Խիարա
Խալահ Պրճ Շիմայի - Ահլի Մարպա Սուր

Ա. Դասակարգի 5րդ հանգրուանի մրցումներուն նախօրեակին այժմ ընդհանուր դասաւորումը կը ներկայացնէ հետեւեալ պատկերը:

	Յ.	Վ.	Պ.	Ն.Շ.	ՍՏ.	ԿԵՏ
1.- Սալամ	3	1	-	10	3	10
2.- Սաժէս	3	1	-	14	11	10
3.- Շապ. Սահէյ	2	2	-	5	2	8
4.- Նըժմէ	2	1	1	10	5	7
5.- Թատ. Սուր	2	1	1	6	2	7
6.- Պրճ	2	1	1	6	4	7
7.- Սաֆա	2	1	1	6	5	7
8.- Ահտ	1	3	-	6	5	6
9.- Անսար	1	2	1	6	6	5
10.- Ռասիւնկ	-	2	2	4	7	2
11.- Շ.Ս.Ը.Ս.	-	2	2	1	5	2
12.- Շ.Ս.Ս.	-	1	3	1	5	1
13.- Ահա Ալէյ	-	1	3	2	8	1
14.- Ահլի Սայտա	-	1	3	2	10	1

ՔԱՂՉԻՕ

ՎԱՂԸ՝ ԻՆԹԵՐ ՍԻԼԱՆ - ԼԱՅԻՕ ՌՈՍՍԱ

Իտալիոյ ֆուտպոլի ախոյեանություն (Քալչիօ) 17րդ եւ երթի վերջին հանգրուանի մրցումներուն, այսօր տեղի ունենալիք միակ մրցումին, Ա. Սէ. Միլան (5րդ) հիւրը պիտի ըլլայ Լէչէի (15րդ): Մնացեալ ութ ճակատումները տեղի պիտի ունենան վաղը՝ Կիրակի:

Ա. Սէ. Միլան, որ այժմ եօթը կէտով ետ կը մնայ Ինթեր Միլանէն, ունի բացակայ մարզիկներ: Անոր կապմէն պիտի բացակային Փաուլօ Մալտինի, Ռոնի Քոսթա եւ Ֆրիփօ Բնցակի:

Պարագլուխի դիրքը գրաւող Ինթեր Միլան, որ «Սան Սիրօ»-ի մէջ պիտի հիւրընկալէ Լացիօ Ռոման (6րդ), յաղթանակի մը պարագային, երթի մրցումները պիտի աւարտէ պարագլուխի դիրքին վրայ, հանդիսանալով Աշնան ախոյեան: Ինթեր դաշտ պիտի ներկայանայ առանց պարպիցի Ռոնալտոյի (վիրաւոր): Մոհամետ Քալոն պիտի ըլլայ Ռոնալտոն փոխարինողը: Իսկ Լացիոյն պիտի բացակայի Տեժան Սթանքովիչ (կախակալուած):

2րդ դիրքը գրաւող Ա. Էս. Ռոմա, որ միայն մէկ կէտի տարբերութեամբ ետ կը մնայ Ինթերէն, պիտի հիւրընկալէ Թորինոն (10րդ): Ա. Էս. Ռոմա ցարդ կը մնայ միակ խումբը, որ կրած է մէկ պարտություն:

4րդ դիրքը գրաւող Եուվէնթուս, որ պիտի հիւրընկալէ Ուտինէպէն (9րդ), պիտի փորձէ որեւէ անակնկալի մը դիմաց չգտնուիլ, նկատի ունենալով, որ Ուտինէպէ օտար դաշտի վրայ այս եղանակին իր կատարած եօթը մրցումներուն արձանագրած է չորս յաղթանակ:

Ստորեւ՝ 17րդ հանգրուանի մրցումներուն յայտագիրը (նշենք, թէ Լացիօ Ռոմա յետաձգուած մրցում մը ունի կատարելիք Քիեւօ Վերոնայի դէմ). բոլոր մրցումներն ալ տեղի կ'ունենան ժամը 16:00ին (Պէյրուքի ժամով), բացի՝ Լէչէ - Ա. Սէ. Միլան եւ Ինթեր Միլան - Լացիօ Ռոմա մրցումներէն, որոնք տեղի կ'ունենան ժամը 21:30ին:

ՕՅՍՕՐ	Լէչէ - Ա. Սէ. Միլան
ՎԱՂԸ	
Արալանթա - Քիեւօ Վերոնա	Պոնտիս - Պրեշիա
Յիորթիսիա - Փերուճիա	Ինթեր Միլան - Լացիօ Ռոմա
Եուվէնթուս - Ուտինէպէ	Ա. Էս. Ռոմա - Թորինօ

